

Կ Ա Ր Գ

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը տարածվում է վտանգավոր բեռներ փոխադրող Հայաստանի Հանրապետությունում գործող երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնող կազմակերպությունների, երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրողների, առաքողների և ստացողների վրա:

2. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման գործընթացը:

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են`

1) **վազոնային թերթիկ**` փաստաթուղթ է, որն օգտագործվում է բեռի բեռնաթափման, հանձնման ժամանակ` բեռնարկղերի և բեռի տեսակավորման ժամանակ, ինչպես նաև բեռների հաշվառման համար` բեռնաթափման և բեռնման ժամանակ.

2) **հատուկ գնացք**` այն բեռնատար գնացքն է, որի կազմում առկա է առնվազն մեկ հատուկ վազոն.

3) **հատուկ վազոն**` այն բեռնատար վազոնն է, որի չափերն ու կառուցվածքը չեն համապատասխանում ցանկում նշված վազոնների պարամետրերին.

4) **տրանսպորտային տարա**` բեռների փոխադրման համար օգտագործվող տարա.

5) **կոշտ տրանսպորտային տարա**` բեռների փոխադրման համար օգտագործվող չդեֆորմացվող տարա.

6) ուղեկցող մասնագետներ՝ բեռնառաքողի (բեռնաստացողի) կողմից լիազորված աշխատողներ, ովքեր ուղեկցում են վտանգավոր բեռները երկաթուղային տրանսպորտով փոխադրման ընթացքում:

II. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

4. Վտանգավոր բեռները բաժանվում են հետևյալ դասերի՝

1) 1-ին դաս՝ պայթավտանգ նյութեր.

2) 2-րդ դաս՝ սեղմված, հեղուկացված և ճնշման տակ լուծված գազեր.

3) 3-րդ դաս՝ դյուրաբոցավառ հեղուկներ.

4) 4-րդ դաս՝ դյուրավառ պինդ, ինքնաբռնկվող և ջրի հետ փոխազդեցության հետևանքով բռնկվող գազեր արտանետող նյութեր.

5) 5-րդ դաս՝ թթվեցնող նյութեր և օրգանական պերօքսիդներ.

6) 6-րդ դաս՝ վտանգավոր քիմիական և վտանգավոր կենսաբանական նյութեր.

7) 7-րդ դաս՝ ռադիոակտիվ նյութեր.

8) 8-րդ դաս՝ այրող և (կամ) քայքայիչ նյութեր.

9) 9-րդ դաս՝ այլ վտանգավոր նյութեր:

5. Փոխադրման ժամանակ յուրաքանչյուր դասի վտանգավոր բեռները, ըստ իրենց ֆիզիկաքիմիական հատկությունների, տեսակի և վտանգավորության աստիճանի, բաժանվում են ենթադասերի, կարգերի և խմբերի, ինչն ամրագրված է սույն կարգում:

6. Վտանգավոր բեռների պատկանելիությունը որոշակի դասի, ենթադասի, կարգի և խմբի որոշվում է միջպետական ստանդարտին համապատասխան: Մեկից ավելի տեսակի վտանգավորություն պարունակող վտանգավոր բեռների դասը (ենթադասը) որոշվում է առաջնային տեսակի վտանգավորության դասին համապատասխան: Այդպիսի բեռների

համար պահպանվում են ինչպես առաջնային վտանգավորության, այնպես էլ լրացուցիչ վտանգավորության դասին պատկանող համապատասխան պահանջները:

7. Երկաթուղային տրանսպորտով փոխադրմանը ենթակա վտանգավոր բեռներն են`

1) երկաթուղային տրանսպորտով փոխադրմանը թույլատրվող վտանգավոր բեռները, որոնք նշված են երկաթուղային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկում (այսուհետ` ցանկ).

2) ցանկում չնշված այն վտանգավոր բեռները, որոնք անհրաժեշտ է փոխադրել մասնագիտացված կամ վարձու վագոններով և բեռնարկներով, Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է փոխադրել միայն ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի թույլտվությամբ: Փոխադրման պայմանները սահմանում է բեռնառաքիչ կազմակերպությունը: Վտանգավոր բեռների փոխադրման համար դիմումներն ուղարկվում են ենթակառուցվածքի կառավարչին ոչ ուշ, քան բեռնառաքումից **6** ամիս առաջ, որոնց կցվում են`

ա. բեռի բնութագիրը և վթարային քարտի ձևերը (**2** օրինակից)` ստորագրված և հաստատված բեռնառաքիչ կազմակերպության ղեկավարի կողմից,

բ. ենթակառուցվածքի կառավարչի հայեցողությամբ կարող են ներկայացվել վտանգավոր բեռի վերաբերյալ միջպետական ստանդարտներ, տեխնիկական պայմաններ և այլ լրացուցիչ փաստաթղթեր.

3) բեռները, որոնք իրենց քիմիական հատկություններով համընկնում են վտանգավոր բեռների հատկությունների հետ, փոխադրվում են բեռնառաքողի կողմից տրված հայտով: Այդ դեպքում հայտում նշվում է փոխադրվող բեռի պարունակությունը` տեխնիկական պայմաններին համապատասխան:

8. Փաստաթղթերը ձևակերպվում են`

1) բեռնառաքողը յուրաքանչյուր վտանգավոր բեռի առաքման համար առաքման կայարանին ներկայացնում է բեռնագիր.

2) վտանգավոր բեռն առաքողը, բեռնագրում նշում է Միավորված ազգերի կազմակերպության նշագրման համարը և բեռի անվանումը.

3) փոխադրմանը թույլատրված վտանգավոր բեռները կարող են գտնվել հետևյալ վիճակներում`

ա. հիմնական նյութի որոշակի պարունակությամբ,

բ. զսպված,

գ. անտարբերակված,

դ. խոնավացվաց:

Վտանգավոր բեռը տվյալ վիճակներում ներկայացնելիս` փոխադրմանը բեռնաառաքողը բեռնագրում բեռի անվանումից հետո նշում է բեռի վիճակը.

4) բեռնագրի վերին մասում բեռնաառաքողը դնում է բեռի համար նախատեսված կարմիր կնիքներ: Ցանկում նշված բեռների փոխադրման համար օգտագործվում են կնիքներ, որոնք նախատեսված են տվյալ բեռի համար` ցանկի 7-րդ սյունակում: Վագոնային թերթիկում նման կնիքները դրվում են առաքող կայարանի կողմից.

5) երկաթուղային տրանսպորտով փոխադրմանը ենթակա վտանգավոր բեռի բնութագիրը և վթարային քարտի ձևերը (2 օրինակից) բեռնաառաքողի կողմից լրացվում է սույն կարգի N 1 ձևին համապատասխան.

6) վտանգավոր բեռների անվտանգ փոխադրման համար անհրաժեշտ վագոնների (բեռնարկղերի) տեխնիկական պատշաճ վիճակը երաշխավորվում է բեռնաառաքող հիմնարկի ղեկավարի կողմից, որը լրացնում և հաստատում է համապատասխան վկայական` համաձայն N 2 ձևի:

9. Վտանգավոր բեռներն ուղեկցվում են`

1) սույն կարգին համապատասխան ցանկում նշված “#” նշանով վտանգավոր բեռները փոխադրվում են բեռնաառաքողի (բեռնասացողի) ուղեկցողների կամ բեռնաառաքողի

(բեռնաստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ: Առանց նշյալ ուղեկցման առաքող կայարանի կողմից նման բեռներով բեռնված վագոնները չեն ընդունվում փոխադրման համար.

2) “#” նշանով նշված վտանգավոր բեռների ուղեկցողները տիրապետում են բեռնաառաքողի կողմից մշակված և հաստատված տվյալ բեռի փոխադրման ծառայողական հրահանգներին, գիտեն բեռի վտանգավոր հատկությունները, առաջին օգնություն ցուցաբերելու համար միջոցառումները, տիրապետում են անվտանգության միջոցառումներին, վթարային իրավիճակներում և երթուղում հսկում են տվյալ բեռի համար նախատեսված անվտանգության միջոցառումների կատարումը, իրենց լիազորությունների սահմաններում, որոնք սահմանվում են բեռնաառաքողների կողմից.

3) բեռնաառաքողն ուղեկցողներին և պահակախմբի անձնակազմին ապահովում է անհրաժեշտ անհատական պահպանման միջոցներով՝ հատուկ զգեստով, դեղարկղով, գործիքների լրակազմով, հրդեհաշիջման և գազազերծման առաջնային միջոցներով, ինչպես նաև անհրաժեշտ օժանդակ նյութերով.

4) այն դեպքում, երբ փոխադրման ընթացքում հայտնաբերվում են վագոնի շահագործումը խոչընդոտող անսարքություններ, վագոնն անջատվում է գնացքից և տեղափոխվում հատուկ առանձնացված ուղիներ, որտեղ և վագոնը պահպանվում է ուղեկցողի կողմից.

5) այն վտանգավոր բեռներով բեռնված վագոնները, որոնք հայտնաբերվել են երթուղում և սույն կարգին համապատասխան չեն ուղեկցվում բեռնաառաքողի կամ բեռնաստացողի ուղեկցողների կողմից, կանգնեցվում են երկաթուղու կայարանում՝ մինչև բեռնաառաքողի (բեռնաստացողի) ներկայացուցիչների ժամանելը: Նշված վագոնները փոխադրվում են երկաթուղու կայարանում հատուկ առանձնացված գծերի վրա կամ այլ անվտանգ տեղ, որը որոշվում է երկաթուղու կայարանի տեխնիկահրահանգային ակտով: Երկաթուղու կայարանի ղեկավարը, որտեղ կանգնեցվել է վագոնը, բեռի առաքման (ընդունման) երկաթուղու կայարանի ղեկավարի միջոցով բեռի կանգնեցման մասին

հաղորդում է բեռնառաքողին (բեռնաստացողին), իսկ բեռնառաքողը (բեռնաստացողը) անմիջապես գործուղում է իր ներկայացուցիչներին բեռի գտնվելու վայրը.

6) ուղեկցող մասնագետները, կարգախմբերը և զինված պահակախմբերը, որոնք ուղեկցում են վտանգավոր բեռները, ենթարկվում են երկաթուղային փոխադրմանը մասնակցող երկրների մաքսային, անձնագրային, երկաթուղային և այլ օրենսդրական ակտերի պահանջներին:

III. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԲԵՌՆԱՐԿՎԵՐՈՎ ԵՎ ՓԱԿ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ

10. Բեռնարկղերով և փակ վագոններով վտանգավոր բեռների փոխադրման ընդհանուր պայմաններն են (տարա, փաթեթավորում և անվանանշում)՝

1) բեռնառաքիչը փոխադրվող վտանգավոր բեռները ներկայացնում է տարայավորված և փաթեթավորված, ինչպես նախատեսված է տվյալ արտադրանքի տեխնիկական պայմաններով: Նյութերը, որոնցով պատրաստված են տարան և փաթեթավորումը, ինքու են բեռի պարունակության նկատմամբ.

2) վտանգավոր բեռները, որոնք անջատում են դյուրաբոցավառ, թունավոր, քայքայիչ գազեր կամ գոլորշիներ, բեռները, որոնք չորանալու դեպքում դառնում են պայթավտանգ կամ կարող են վտանգավոր փոխազդեցության մեջ մտնել օդի և խոնավության հետ, ինչպես նաև բեռներ, որոնք օժտված են թթվեցնող հատկություններով, հերմետիկ փաթեթավորվում են և նշվում են <*> նիշով: <*> - նշանակում է հերմետիկ տարա, որի կառուցվածքն ապահովում է գազերի, գոլորշիների և հեղուկների անթափանցելիությունը.

3) ապակե տարայով վտանգավոր բեռները դասավորվում են ամուր արկղերում (փայտե, պոլիմերային, մետաղական) և նրանց միջև դրվում են համապատասխան չայրվող միջադիրներ և ներծծող նյութեր: Փոքր կապոցաբաշխումներով բեռները, որոնք փոխադրվում են որպես ոչ վտանգավոր բեռներ՝ համաձայն 17-րդ կետի 1-ին ենթակետի,

թույլատրվում է դասավորել ծալքավորված ստվարաթղթե արկղերում: Արկղերն ունեն կողապատեր, ներդիրներ, միջնապատեր, ցանցեր, միջադիրներ և հարվածամեղմիչներ: Արկղերի պատերը 5 սմ-ով բարձր են դրանցում փակվող շշերից և բանկաներից: Մանր առաքումներով բեռների փոխադրման դեպքում ապակե տարայով վտանգավոր բեռները փակվում են կապարիչներով և դասավորվում պինդ փայտե արկղերում:

4) մետաղական կամ պոլիմերային բանկաներով, բիդոններով և կանիստրներով վտանգավոր բեռները լրացուցիչ փաթեթավորվում են պինդ փայտե արկղերում կամ լինում են կավարապատված:

5) վտանգավոր բեռները պարկերում և ծալքավորված ստվարաթղթե արկղերում, եթե այդպիսի փաթեթավորում նախատեսված է միջպետական ստանդարտներով կամ արտադրանքի տեխնիկական պայմաններով, առաքվում են վազոնային փոխադրամաբ: Մանր փոխադրումներով առաքման դեպքում, պարկերով փոխադրելիս, վտանգավոր բեռները փաթեթավորվում են կոշտ տրանսպորտային տարաներով:

6) վտանգավոր հեղուկ բեռներ փոխադրելու դեպքում տարան լցվում է մինչև տվյալ բեռի համար նախատեսված չափը:

7) միևնույն բեռնատեղում համատեղ փաթեթավորել թույլատրվում է միայն այն վտանգավոր բեռները, որոնք թույլատրվում է համատեղ փոխադրել մեկ վազոնով՝ համաձայն **NN 14** և **15** աղյուսակների: Այդ դեպքում յուրաքանչյուր ապրանք փաթեթավորվում է առանձին, տվյալ ապրանքի միջպետական ստանդարտների կամ տեխնիկական պայմաններին համապատասխան: Փաթեթավորված ապրանքները տեղադրում են բներով՝ փայտե ամուր արկղերի մեջ: Արկղի հատակը, բներում ազատ տարածությունները, ինչպես նաև ազատ տարածությունները կափարիչների տակ լցվում են համապատասխան փափուկ, չայրվող փաթեթավորման նյութով: Արկղն ամուր փակվում է կափարիչով: Բեռի և տարայի գումարային զանգվածը չպետք է գերազանցի **50** կգ-ը: Բոլոր համատեղ փաթեթավորված ապրանքները յուրաքանչյուր ապրանքի զանգվածի նշումով անվանանշվում է բեռնագրում:

8) բեռնարկերով փոխադրմանը թույլատրվող վտանգավոր բեռները փաթեթավորվում են այնպես, ինչպես և փակ վագոններով փոխադրման ժամանակ.

9) դժվարահաս շրջաններ փոխադրվող վտանգավոր բեռներն ունենում են հատուկ տարա և փաթեթավորում.

10) վագոններով վտանգավոր հեղուկ բեռների փոխադրման դեպքում բեռնառաքիչը վագոններում ունենում է 1%-ից ոչ պակաս դատարկ պահեստային տարա՝ նախատեսված այլ բեռնատար տեղերի տարաների վնասման դեպքերի համար.

11) վտանգավոր բեռների բեռնատար տեղերը տեսականշվում են.

12) յուրաքանչյուր բեռնատար տեղի վրա տեսականշումներից բացի կատարվում են նշումներ պարունակության, բեռի բնութագրի և վտանգավորության աստիճանի մասին.

13) վտանգավոր նշանների տեղադրումը կատարվում է արկղերի և տրանսպորտային կապոցների երեք մակերեսների վրա (կողային, ճակատային և վերին), տակառների դեպքում՝ հատակի և կողապատերի վրա (զլանային մասում), կապոցների և հակերի դեպքում՝ գագաթնային և կողային մակերեսներին, այլ ձևի տարաների վրա (զլանանոթների և այլն), առավել հարմար տեղերում, վագոնում տեղավորելիս տեսանելի լինելու համար.

14) թղթե կամ սովարաթղթե վտանգի նշանները սոսնձվում են տարային: Կտորից նշանները կարվում են: Նրբատախտակից, մետաղյա, պլաստմասսայե նշաններն ամրացվում են հեղյուսներով, պտուտամեխերով, մեխերով, ինչպես նաև մետաղալարերով, եթե այլ միջոցների կիրառումը հնարավոր չէ (բեռներ գլանանոթներում և այլն): Նշանի և փաթեթավորումի գույների համընկման դեպքում նշանը դրվում է ներկի և շաբլոնների օգնությամբ փաթեթավորման հակադրական երանգի վրա.

15) վտանգի նշանները բաժանվում են՝

ա. հիմնական, որը բնութագրում է վտանգի հիմնական տեսակը և համապատասխանում է բեռի դասին (ենթադասին),

բ. լրացուցիչ, որը բնութագրում է լրացուցիչ վտանգի տեսքը, եթե բեռն օժտված է վտանգի մի քանի տեսակներով, ապա բեռնառաքիչը փաթեթավորման վրա տեղադրում է բոլոր նշանները համապատասխան վտանգների: Այդ դեպքում ենթադասի համարը դրվում է միայն հիմնական վտանգավորության նշանի վրա.

16) բեռնատար տեղում, տարբեր դասերի վտանգավոր բեռների համատեղ փաթեթավորման դեպքում, յուրաքանչյուր բեռի համար դրվում են համապատասխան վտանգի նշաններ.

17) վտանգավոր բեռները տրանսպորտային կապոցներով փոխադրելու դեպքում վտանգի նշանները դրվում են ինչպես փաթեթավորման, այնպես էլ կապոցների վրա, եթե ձևավորված կապոցներում փաթեթավորման վրա դրված վտանգի նշանները տեսանելի չեն:

11. Վագոններին, բեռնարկղերին և դրանցում վտանգավոր բեռի տեղաբաշխմանը ներկայացվող պահանջներն են`

1) վտանգավոր բեռների փոխադրման համար օգտագործվում են ընդհանուր օգտագործման երկաթուղու կայարանի բեռնատար վագոնները (այսուհետ` երկաթուղային կայարանի վագոններ), ինչպես նաև բեռնառաքիչներին պատկանող մասնագիտացված վագոնները կամ երկաթուղային կայարանի կողմից հատուկ տրամադրված` բեռնառաքիչների (բեռնստացողների) վարձակալած մասնագիտացված վագոնները: Որոշ վտանգավոր բեռներ թույլատրվում է փոխադրել բաց շարժական կազմով (կիսավագոններով կամ հենահարթակներով)`

ա. վտանգավոր բեռների փոխադրման համար կարող են օգտագործվել նաև բեռնառաքիչների (բեռնստացողների) մասնագիտացված բեռնարկղերը,

բ. վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված մասնագիտացված վագոնների և բեռնարկղերի կառուցվածքը և պարամետրերը ապահովում են բեռի անվտանգ պահպանումը և փոխադրումը,

գ. մասնագիտացվաց բեռնարկղ-ցիստեռները (այսուհետ՝ ցիստեռն), որոնք նախատեսված են հեղուկ վտանգավոր բեռների փոխադրման համար, չունեն ստորին արտածման սարքավորում և ունեն իրավասու մարմնի սերտեֆիկատ, որը հաստատում է ցիստեռնի պարբերաբար ստուգումը և դրանում նախատեսված վտանգավոր բեռի փոխադրման հնարավորությունը.

2) վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված վագոնները և բեռնարկղերը, բացի նշաններից ու գրություններից՝ համաձայն ցանկի, ունեն փոխադրվող բեռի Միավորված ազգերի կազմակերպության նշագրման համար և վտանգի նշաններ՝ բեռի վտանգավորությանը համապատասխան: Առանձին վագոններով փոխադրման դեպքում վագոնների վրա վտանգի նշանները տեղադրվում են բեռնառաքիչների կողմից: Բեռնարկղերի և վագոնների վրա վտանգի նշանների օգտագործման կարգը շարադրված է սույն կարգի 43-րդ կետում.

3) վտանգավոր բեռներով բեռնվող վագոնները և բեռնարկղերը գտնվում են սարքին վիճակում, մաքրված՝ մինչ այդ փոխադրված բեռի մնացորդներից և աղբից: Վտանգավոր բեռների բեռնման համար օգտագործվում են միայն մետաղական բազմաֆունկցիոնալ բեռնարկղեր: Յուրաքանչյուր մասնագիտացված կամ վարձակալած վագոնը, ինչպես նաև ցիստեռնը բեռնելուց առաջ բեռնառաքողը կայարանի և վագոնների նորոգման կայանի աշխատողներին ներկայացնում է ենթակառուցվածքի կառավարչի կողմից հաստատված վկայական՝ վագոնի կամ ցիստեռնի տեխնիկական վիճակի մասին, որում նշվում է նաև ամրանների և սարքավորումների վիճակը, որով երաշխավորվում է բեռի անվտանգ փոխադրումը: Տեղեկանքը չհաստատվելու պարագայում վագոնները վտանգավոր բեռներով չեն բեռնվում.

4) ենթակառուցվածքի կառավարիչը սահմանում է՝

ա. նախապատրաստված վագոնները բեռնման երկաթուղու կայարան ուղարկելու կարգը,

բ. կայարաններում վտանգավոր բեռների բեռնման ժամանակ, որտեղ չկան վագոնային տնտեսության ծառայության աշխատողներ, վագոնների նախապատրաստման և զննման կարգը.

5) բեռնառաքիչին (բեռնստացողին) պատկանող մասնագիտացված վագոնները, երկաթուղային պարկի կողմից հատուկ հատկացված վագոնները կամ բեռնառաքիչի (բեռնստացողի) վարձակալված վագոնները կցագրվում են բեռնման (բեռնաթափման) երկաթուղային կայարանին: Դրանցում թույլատրվում է փոխադրել միայն այն վտանգավոր բեռները, որոնց համար նախատեսված են տվյալ վագոնները: Մասնագիտացված և վարձակալված վագոնները բեռնստացողի միջոցներով բեռնաթափումից և փոխադրված բեռի մնացորդից մաքրելուց հետո կարող են օգտագործվել բեռնստացողի կողմից տվյալ վտանգավոր բեռների դատարկ տարայի փոխադրման համար, բեռնառաքողի հասցեով` 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պայմաններին համապատասխան: Մասնագիտացված և վարձակալված վագոնների բեռումն ու բեռնաթափումն իրականացվում են մերձատար գծերի վրա: Այդ վագոններով բեռների փոխադրումը թույլատրվում է միայն վագոնային փոխադրմամբ.

6) բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված վագոնները կահավորվում են բեռի ամրացման հարմարանքներով, ինչպես նաև համալրվում են բոլոր միջոցներով, որոնք նախատեսված են նման վագոնների շահագործման հրահանգներով.

7) վարձակալված վագոնները կահավորվում են բեռնառաքիչի (բեռնստացողի) միջոցներով և ուժերով, այն բեռների փոխադրման պայմաններին համաձայն, որոնց համար վարձակալվել են այդ վագոնները: Բեռների խմբերի կամ տվյալ բեռների փոխադրման համար վարձակալված վագոնների դեպքում բեռնառաքիչը (բեռնստացողը) վտանգի նշանից վեր գրառում է բեռի կամ բեռի խմբերի անվանումը (տառերի բարձրությունը 15 սմ): Վտանգի նշանի տակ` դռան ամբողջ լայնությամբ, սև ներկով գրառվում է «Այլ բեռներով

չբեռնել» կամ «Բեռնել միայն հաշվառված երկաթուղու կայարանում» (տատերի բարձրությունը **10** սմ): Դռնից ձախ գրվում է՝ «Վարձակալված է ... (նշում են վարձակալողի անվանումը) կողմից»: Շտապ վերադարձ ... (ցույց են տալիս հաշվառման երկաթուղու կայարանն ու ճանապարհը) երկաթուղու կայարան.

8) ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի վագոնները և բեռնարկղերը վտանգավոր բեռներից բեռնաթափելուց հետո բեռնստացողները զննում են բեռնարկղերը կամ վագոնների թափքերը՝ վերացնելով փոխադրվող բեռի մնացորդները և աղբը՝ պահպանելով նախազգուշության և անվտանգության կանոնները, իսկ անհրաժեշտության դեպքում լվանում, վնասագերծում (գազագերծում) և հանում են վտանգի նշանները վագոնների և բեռնարկղերի վրայից: Այլ կերպ այդ հարցերը կողմերի միջև կարող են կարգավորվել նաև պայմանագրով.

9) N 1 հավելվածի 3-րդ և 7-րդ սյունակներում նշված վտանգավոր քիմիական և այրիչ հատկություններով օժտված նյութերի վագոնային փոխադրման դեպքում մարդկանց, կենդանիներին թունավորումից և բեռների մնացորդներով շրջապատող միջավայրի աղտոտումից խուսափելու նպատակով բեռնստացողը բեռնաթափումից հետո իր ուժերով և միջոցներով մանրամասն մաքրում է վագոնները՝ փոխադրված բեռի մնացորդից.

10) բեռնման կետում գրանցված մասնագիտացված և վարձու վագոնները բեռնաթափումից և դրանցում փոխադրված բեռի մնացորդներից մաքրելուց հետո բեռնստացողը վագոնները՝ կապարակնքված վիճակում և փոխադրման փաստաթղթերով ու սարքավորումների հետ միասին, ուղարկում է վագոնների հաշվառման երկաթուղու կայարաններ: Վագոնները վերանորոգման ուղարկելիս վնասագերծվում և լվացվում են: Վարձակալության ժամկետի լրանալու դեպքում վարձակալողը (բեռնատաքողը կամ բեռստացողը) իր ուժերով և միջոցներով վնասագերծում է (գազագերծում է) վագոնները և հանում վտանգի նշանները: Միայն դրանից հետո վագոններն ընդունվում են երկաթուղու կայարանների կողմից և կարող են օգտագործվել այլ բեռների փոխադրման համար.

11) ինչպես բեռնված, այնպես էլ դատարկ մասնագիտացված բեռնարկերի փոխադրման դեպքում դրանց արտաքին մակերևույթի վրա չի թույլատրվում վտանգավոր բեռների մնացորդների և հետքերի առկայությունը.

12) վտանգավոր բեռների փոխադրման համար մասնագիտացված բեռնարկերը դատարկ վիճակում ներկայացվում են դռների, դռնակների և այլ փակման սարքավորումների նույնպիսի հերմետիկ փակումով, ինչպես և բեռնված վիճակում.

13) ներսից և դրսից մաքրված և լվացված, դատարկ մասնագիտացված բեռնարկերի վերադարձման դեպքում բեռնառաքիչը բեռնագրի «Բեռի անվանանշում» սյունակում կատարում է նշումներ՝ «Բեռնարկը դատարկված, մաքրված, լվացված և անվտանգ է ... (նշվում է փոխադրված բեռի անվանումը) ...ից».

14) փոխադրված բեռի մնացորդ կամ մնացորդային ճնշում ունեցող, դատարկ մասնագիտացված բեռնարկերի վերադարձն իրականացվում է փոխադրվող բեռի համար սույն կարգին համապատասխան, եթե նորմատիվատեխնիկական փաստաթղթերով այդ բեռնարկի կամ արտադրանքի վերաբերյալ այդպիսի վերադարձը նախատեսված է.

15) վտանգավոր բեռների տեղավորումն ու ամրացումը փակ վագոններում և բեռնարկերում, ինչպես նաև վտանգավոր բեռներով բեռնարկերի տեղաբաշխումն ու ամրացումը բաց շարժակազմի վրա իրականացվում են բեռնման տեխնիկական պայմաններին և սույն կարգին համապատասխան.

16) վտանգավոր բեռները մի քանի հարկաշարքով տեղաբաշխման դեպքում բեռի դարսվածքի կայունությունն ապահովելու և փաթեթավորումը վնասվելուց պահպանելու համար հարկաշարքերի միջև տեղադրվում են 20 մմ-ից ոչ պակաս հաստության տախտակներ.

17) վագոնների (բեռնարկերի) հակահրդեհային նախապատրաստումը տվյալ բեռի փոխադրման համար կատարում է բեռնառաքողը: Ընդ որում, բեռնառաքողն ստուգում է առաքվող բեռի, վագոնների (բեռնարկերի) կիպացման համար կիրառվող նյութերին ներկայացվող համատեղելիության պահանջների ապահովումը:

12. Վտանգավոր բեռների ընդունման և հանձնման պայմաններն են՝

1) վտանգավոր բեռները տեղափոխման են ներկայացվում ոչ ընդհանուր օգտագործման տեղերում: Բացառություն են կազմում մանր և բեռնարկղային առաքանիները, որոնց ընդունումն իրականացվում է ինչպես ընդհանուր, այնպես էլ ոչ ընդհանուր օգտագործման տեղերում.

2) վտանգավոր բեռների ընդունումը և հանձնումն ընդհանուր օգտագործման տեղերում իրականացվում է, որպես կանոն, ուղիղ տարբերակով «ավտոմեքենա-վագոն», «վագոն-ավտոմեքենա», բեռնառաքողի կամ բեռնստացողի, ինչպես նաև երկաթուղային կայարանի աշխատողների անմիջական հսկողության ներքո.

3) տվյալ վտանգավոր բեռը (բացառությամբ մանր փաթեթավորումով բեռների) կարող է ներկայացվել փոխադրման միայն ցանկում նշված առաքման ձևերով: Միավորված ազգերի կազմակերպության **1263** ներկեր նիշերով բեռները (ներառյալ ներկը, արծնը, օլիֆը, պոլիտրան, հեղուկ լցանյութերը, հեղուկ լաքային հիմքերը) կամ ներկի հետ օգտագործվող նյութերը (ներառյալ լուծիչը կամ ներկը հեռացնող նյութը), **1993** լուծիչները: Արգելակային հեղուկ «Նեվա» կարող է ներկայացվել փոխադրման բազմաֆունկցիոնալ երկաթուղային բեռնարկղերով, իսկ **2810** տոտուները, **2810** էթիլենգլիկոլային անտիֆրիզները, բեռնառաքողների (բեռնստացողների) մասնագիտացված բեռնարկղերով.

4) եթե վտանգավոր բեռի մանր խմբաքանակի առաքման ընթացքում նույնիսկ մեկ տեղում հայտնաբերվի պիտակավորման կամ փաթեթավորման խախտում, փաթեթավորման անհամապատասխանություն սույն կարգին, բեռնառաքողի կողմից նշված քաշի անճշտություն, ապա այդ առաքանին փոխադրման չի ընդունվում, ինչի մասին երկաթուղու կայարանի աշխատողների կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն, որը հաստատվում է երկաթուղու առաքման կայարանի կայարանապետի կողմից.

5) վտանգավոր բեռներով ժամանած վագոններն ընդունվում են բեռնստացողների կողմից իրենց մերձատար ուղիների վրա: Վտանգավոր բեռներով մանր առաքանիները և

բեռնարկները դուրս են բերվում կայարանից **24** ժամվա ընթացքում՝ սկսած բեռնստացողի բեռի ժամանման մասին ծանուցում ստանալու պահից:

13. Վտանգավոր բեռների համատեղ փոխադրման պայմաններն են՝

1) միևնույն վագոնը կամ բեռնարկը չի բեռնվում տարբեր, ինչպես նաև որոշ դեպքերում միևնույն դասակարգային ծածկագիր ունեցող վտանգավոր բեռներով, որոնք համատեղ չեն փոխադրվում՝ համաձայն **N 14** աղյուսակի: Միևնույն վագոնում կամ բեռնարկում վտանգավոր բեռների փոխադրումն անվտանգ բեռների հետ համատեղ կատարվում է համաձայն **N 15** աղյուսակի.

2) միևնույն վագոնով թույլատրվում է համատեղ փոխադրել դյուրավառ հեղուկներ (**3-րդ դաս**) և թթուներ (**8.1-ին ենթադաս**), որոնք ընդգրկված են բժշկական լաբորատոր գույքի լրակազմում: Դյուրավառ հեղուկները փաթեթավորվում են հերմետիկ տարաներում (ապակյա տարայի տարողությունը չի գերազանցում **1լ-ը**) և տեղադրվում են կիպ փայտե արկղերում, որոնք ամբողջ բարձրությամբ կահավորվում են խորշերով: Անհրաժեշտության դեպքում արկղերն ունենում են հորիզոնական ներդիրներ, մեղմացուցիչներ: Կապարիչի տակ և խորշերում ազատ տարածությունը կիպացվում է չայրվող ներդիրային նյութով: Թթու պարունակող ապակյա տարաները փակվում են կիպահղկված ապակյա խցաններով, որոնք ամրացված են ապահովիչ թասակներով և տեղադրվում են առանձին կիպ փայտե խորշեր պարունակող արկղերում: Արկղերի խորշերը շրջադրվում են փափուկ չայրվող նյութերով խարամաբամբակով, կիզելգուրով և այլն: Թթուների փաթեթավորման համար չի թույլատրվում օգտագործել թուղթ, փայտե թեփ, տաշեղ, ծղոտ և այլ այրվող և դյուրավառ նյութեր: Արկղի անգուտ քաշը չի գերազանցում **50 կգ-ը**: Վագոնների բարձման ընթացքում թթուների տեղը հատկացվում է դյուրավառ հեղուկներով և այրվող նյութեր պարունակող արկղերի հակադիր կողմում: Բոլոր տեղերը կիպ տեղակայվում են միմյանց նկատմամբ և ամրացվում են:

14. Մանր կապոցաբաշխմամբ վտանգավոր բեռների փոխադրման պայմաններն են՝

1) մանր կապոցաբաշխամամբ վտանգավոր բեռները, այսինքն 1կգ-ից պակաս զուտ քաշով և 1լ-ը չգերազանցող ծավալով, որոնք նշված են ցանկում “*” (համաձայն N 1 հավելվածի), փոխադրվում են մանր առաքումներով և բազմաֆունկցիոնալ բեռնարկղերով ընդհանուր հիմունքներով, որպես անվտանգ բեռ: Նման դեպքերում բեռնագրում բեռի վտանգավորության նշումները չեն կատարվում: Մնացած մանր կապոցաբաշխված վտանգավոր բեռները, բացի բեռներից, որոնց համար նախատեսված է միայն առանձին վագոններով փոխադրում (տես 15-րդ կետը) թույլատրվում է փոխադրել մանր առաքումներով նաև բազմաֆունկցիոնալ բեռնարկղերով սույն կարգով նախատեսված պայմաններով:

2) տարբեր անվանումներով տարբեր վտանգավոր բեռները, ինչպես նաև վտանգավոր բեռներն անվտանգների հետ մանր կապոցաբաշխամամբ թույլատրվում է փաթեթավորել միևնույն բեռնատեղում 9-րդ կետի 7-րդ ենթակետով թվարկված պահանջներին համապատասխան:

3) մանր կապոցաբաշխամամբ վտանգավոր բեռները փաթեթավորվում են 9-րդ կետի պահանջներին համապատասխան:

4) արտաքին փաթեթավորման վրա և բեռնագրում բեռի անվանումից հետո կատարվում է նշում՝ «Մանր կապոցաբաշխամամբ»:

15. Դատարկ տարայի վերադարձի պայմաններն են՝

1) վտանգավոր բեռների դատարկ տարաները (բացի 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշվածներից) թույլատրվում է փոխադրել ընդհանուր հիմունքներով, որպես անվտանգ բեռ: Դրանց ներսից և դրսից մաքրման և վնասագերծման պայմանով, ինչպես նաև վտանգի նշանների հեռացումով:

2) մասնագիտացված կամ վարձակալված վագոններով փոխադրված վտանգավոր բեռների դատարկ տարաները փոխադրվում են տվյալ բեռի համար նախատեսված վագոններով՝ բեռնատացողի կողմից, դրանք դատարկելուց հետո: Նման տարաների փոխադրումն այլ վագոններով չի իրականացվում: Դատարկ տարաները փոխադրվում են

արտաքինից մաքրած, խցաններով կիպ փակած, դրանում եղած բեռի փոխադրման պահանջներին համապատասխան:

16. Վտանգավոր բեռների փոխադրման հատուկ պայմաններն են՝ բացի **9**-րդ կետում թվարկված ընդհանուր պահանջներից, վտանգավոր բեռների փոխադրման ընթացքում, կախված բեռի հատկություններից և վտանգի բնույթից, անհրաժեշտ է պահպանել հատուկ պահանջները, որոնք շարադրված են **16-30**-րդ կետերում:

17. Դաս 1. Պայթավտանգ նյութերն են.

1) պայթավտանգ նյութերին պատկանում են այն նյութերը, որոնք ընդունակ են քիմիական ձևափոխումների արտաքին, մեխանիկական, էլեկտրական, ջերմային և այլ ազդեցությունների պատճառով: Պիրոտեխնիկական նյութերը և խառնուրդները, իրերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի պայթավտանգ կամ պիրոտեխնիկական նյութեր.

2) երկաթուղային տեղափոխման են թույլատրվում միայն ցանկում անվանանշված պայթավտանգ նյութերը.

3) կարգում և ցանկում փոփոխությունները և լրացումները կատարվում են արտադրանքը նախագծող կամ պատրաստող գերատեսչությունների, նախարարությունների ներկայացմամբ, որը նախապես համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ.

4) պայթավտանգ նյութերին մշակողի կողմից տրվում է անվանում և Միավորված ազգերի կազմակերպության ցանկով սահմանված նշագրման համար: Պայթուցիկ նյութեր ստեղծող կազմակերպության կողմից պայթավտանգ նյութերին շնորհվում է նաև պայմանական համար, որը նշվում է պայթավտանգ նյութերի նորմատիվային փաստաթղթերում: Բեռներն առաքման ներկայացնելիս պայթավտանգ նյութերի անվանման, Միավորված

ազգերի կազմակերպության ցանկով սահմանված նշագրման համարի և պայմանական համարի համապատասխանության որոշումը կատարվում է բեռնառաքողի կողմից.

5) յուրաքանչյուր պայթավտանգ նյութի կամ պայթավտանգ նյութերի խմբի համար պայթավտանգ նյութեր ստեղծող կազմակերպությունը մշակում է նաև վթարային քարտեր, որտեղ նշվում է պայթավտանգ նյութերի հատկությունները, նրա հրդեհավտանգությունը և պայթունավտանգությունը, մարդկանց կյանքին սպառնացող վտանգը, կոնկրետ անվտանգության միջոցառումները և նախագուշացման գործողությունները, վթարային իրավիճակներ առաջանալու դեպքում և դրանց հետևանքների չեզոքացման կարգը: Պայթուցիկ նյութերի վթարային քարտերը հաստատվում են պայթավտանգ նյութեր ստեղծող կազմակերպությունների կողմից: Յուրաքանչյուր պայթավտանգ նյութերի վթարային քարտին տրվում է համար: Նոր պայթավտանգ նյութերը չեն ներառվում և չեն ներկայացվում փոխադրման առանց մշակված և հաստատված վթարային քարտերի.

6) երկաթուղով պայթավտանգ նյութերի փոխադրումը կատարվում է բեռնառաքողին (բեռնստացողին) պատկանող կամ նրանց կողմից վարձակալված մասնագիտացված վագոններով և բեռնարկղերով, ինչպես նաև երկաթուղու վագոններով.

7) առանձին դեպքերում պայթավտանգ նյութերի փոխադրման համար թույլատրվում է օգտագործել հատուկ կառուցվածքի և գույնի վագոններ.

8) բաց շարժակազմով պայթավտանգ նյութերը կարելի է փոխադրել միայն այն դեպքում, երբ նման հնարավորությունը նախատեսված է արտադրանքի տեխնիկական փաստաթղթերով: Բեռնառաքողն իրավունք ունի բաց շարժակազմի փոխարեն օգտագործել փակ վագոններ, երբ իր կողմից մշակվում և ընդունվում է պայթավտան նյութերի փակ վագոնում տեղաբաշխելու և ամրացնելու կարգը.

9) պայթավտանգ նյութեր փոխադրող վագոններն ունեն հատուկ սարքավորումներ բեռի ամրացման համար, որոնք համապատասխանում են բեռնառաքողի կողմից մշակված պահանջներին: Այդ վագոններում համատեղ որևէ այլ բեռներ չեն փոխադրվում: Դատարկ

վագոնների վերադարձն իրականացվում է կապարակնքված վիճակում՝ փոխադրման ամբողջական փաստաթղթերի հիման վրա:

Նախատեսված պայթավտանգ նյութերի փոխադրման համար մասնագիտացված բեռնարկղերի կառուցվածքը և պարամետրերը համապատասխանում են տվյալ արտադրանքի տեխնիկական պայմանների պահանջներին: Տվյալ պայթավտանգ նյութերի փոխադրման համար նախատեսված բեռնարկղերի պիտանելիությունը ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական տեսանկյունից որոշվում է բեռնառաքողի կողմից.

10) մասնագիտացված բեռնարկղերով պայթավտանգ նյութերի փոխադրումն իրականացվում է միայն բեռնարկղերով՝ վագոնը լրիվ լրակազմով բարձման դեպքում: Բաց շարժակազմով փոխադրման դեպքում նման բեռնարկղերն ունեն 5 մ³-ից ոչ պակաս ներքին ծավալ: Բեռնված պայթավտանգ նյութերով մասնագիտացված բեռնարկղերը, որոնց տեսակը և պարամետրերը չեն համապատասխանում երկաթուղային բազմաֆունկցիոնալ բեռնարկղերի տեսակին և պարամետրերին, ապահովության նպատակով կարող են փոխադրման ներկայացվել բաց շարժակազմով փոխադրելու համար, միայն բեռնառաքողի մասնագետների կամ պահակախմբի ուղեկցությամբ:

Ենթակետերում (**8**-րդ, **9**-րդ և **10**-րդ) նախատեսված գործողությունները կարող են կարգավորվել նաև պայմանագրային հիմունքներով.

11) երկաթուղով պայթավտանգ նյութերի փոխադրումը թույլատրվում է բեռնատար կամ հատուկ գնացքներով.

12) միննույն վագոնում կամ միննույն վագոնի տարբեր բեռնարկղերում տարբեր պայթավտանգ նյութերի համատեղ փոխադրման հնարավորությունը որոշում է բեռնառաքողը՝ սույն կարգի **46**-րդ կետին համապատասխան: Միննույն բեռնարկղում տարբեր պայմանական համարներ ունեցող պայթավտանգ նյութերի փոխադրումը (բացի նույն լրակազմում ընդգրկված պայթավտանգ նյութերի) չի իրականացվում: Միննույն վագոնում պայթավտանգ նյութերի համատեղ փոխադրումը (տարբեր բեռնարկղերում) չի իրականացվում հետևյալ բեռների հետ՝

ա. այլ դասերի վտանգավոր բեռների,

բ. անկախ փաթեթավորումից բոլոր տեսակի անվտանգ հեղուկ բեռների, յուղերի, նավթամթերքների.

13) թույլատրվում է մեկ բեռնառաքողից պայթավտանգ նյութերի մանր խմբաքանակները փոխադրել մի քանի բեռնաստացողներին ընթացքում մասնակի բեռնաթափումներով և բեռնումներով: Նման փոխադրումը կատարվում է հետևալ պայմանների պահպանմամբ`

ա. միննույն վագոն կարող են բարձվել պայթավտանգ նյութեր նախատեսված մեկ և ավելի բեռնաստացողների համար, եթե բեռի ընդունման կայարանները գտնվում են համընթաց ուղղությամբ: Երթուղու ընթացքում նման վագոնի բեռնումը կատարվում է միայն պայթավտանգ նյութերի մասնակի բեռնաթափման տեղերում: Լրաբեռնված բեռի նշանակման կայարանները համընկնում են վագոնում մնացած պայթավտանգ նյութերի նշանակման կայարանների հետ: Լրաբեռնված պայթավտանգ նյութերը համատեղելի են վագոնում եղած պայթավտանգ նյութերի հետ,

բ. բեռնառաքողը բարձման ընթացքում պայթավտանգ նյութերը տեղաբաշխում է այնպես, որ ապահովի վագոնի համաչափ բարձումն ամբողջ երթուղու երկարությամբ: Ընդ որում, միջոցնային տարածքը բարձվում է այն խմբաքանակներով, որոնք բեռնաթափվելու են առաջին հերթին,

գ. վագոնում պայթավտանգ նյութերը տեղաբաշխվում և ամրացվում են այնպես, որ յուրաքանչյուր խմբաքանակի համար հնարավոր լինի առանց բեռը տեղաշարժելու ստուգել պայթավտանգ նյութերի մակնշավորումը և տեղերի քանակը, իսկ բեռնաթափումը հնարավոր լինի իրականացնել առանց այլ բեռները տեղաշարժելու,

դ. պայթավտանգ նյութերի բարձումը, բեռնաթափումը և բեռնումը կատարվում են միայն բեռնառաքողին պատկանող կամ նրա կողմից վարձակալված մերձատար ուղիների վրա,

ե. այդ եղանակով փոխադրվող փոքր խմբաքանակի պայթավտանգ նյութերն ուղեկցվում և պահպանվում են ամբողջ երթուղու ընթացքում բեռնառաքողի մասնագետների կողմից, որոնք անմիջականորեն ստանում (հանձնում) են պայթավտանգ նյութերը բեռնառաքողներից (բեռնստացողներից): Մասնակի բեռնաթափումից (բարձելուց) հետո վագոնը կապարակնքվում է նշված մասնագետների կողմից, ինչի համար բեռնառաքողն ապահովում է նրանց կապարակնքման համար համապատասխան սարքավորումներով (կապարակնիքներով, փակող-կապարակնքող հարմարանքներով, մամլակներով, հանիչներով և այլն):

14) պայթավտանգ նյութերի փոխադրումը մանր առաքանիներով երկաթուղային պարկի բազմաֆունկցիոնալ բեռնարկղերով և վագոններով չի իրականացվում:

15) մինչև կանոնավոր շահագործման հանձնելը, կառուցվող կայարանները և երթուղային գծերը, որոնք օգտագործվում են պայթավտանգ նյութերի փոխադրման համար, որոշվում են կառուցող կազմակերպության կողմից:

16) երկաթուղային շարժակազմի, բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված բեռնարկղերը պայթավտանգ նյութերով իրենց բեռնունակությունից ավելին չեն բեռնվում: Փակ վագոններում, բեռնարկղերում, ներառված մասնագիտացվածները, գտնվող պայթավտանգ նյութերի, ինչպես նաև շարժակազմի վրա գտնվող բեռնարկղերի տեղաբաշխման և ամրացման սխեմաները մշակվում և հաստատվում են բեռնառաքիչների կողմից: Անհրաժեշտության դեպքում երկաթուղին բեռնառաքչից կարող է պահանջել բեռի բեռնման և ամրացման սխեմաները:

18. Դաս 2. Սեղմված, հեղուկացված և ճնշման տակ լուծված գազերն են`

1) սույն դասի նյութերը գազեր են, որոնք փոխադրվում են սեղմված, հեղուկացված կամ լուծված ձևերով: Նրանք մշտապես ճնշման տակ են և պահանջում են առավել ամուր և հերմետիկ փաթեթավորում: Սույն դասի նյութերի ընդհանուր վտանգավոր հատկությունը

ճնշման արագ աճն է՝ ջերմաստիճանի բարձրացման հետևանքով, ինչը կարող է հանգեցնել պայթյունի կամ անոթների վնասմանը.

2) սեղմված, հեղուկացված կամ ճնշման տակ լուծված գազերի փոխադրումն իրականացվում է բալոններով, անոթներով կամ մասնագիտացված բեռնարկղերով.

3) բեռնառաքողը փոխադրմանը ներկայացնում է սեղմված, հեղուկացված կամ ճնշման տակ լուծված գազերի բալոններ՝ միայն բալոնների և նրանց ծորակների լիովին սարքին վիճակում լինելու պայմանով: Բալոններն ունենում են համապատասխան գույն և պարզ երևացող, յուրաքանչյուր գազին համապատասխանող գունավոր ներկաշերտեր, ինչպես նաև՝

ա. մակագրություն «Պողպատե փոքր կամ միջին ծավալի գազի բալոններ $P \leq 19,6$ ՄՊա տեխնիկական պայմաններ»,

բ. բեռնառաքիչի կամ բալոնները լիցքավորող գործարանի կապարակնքված ապահովիչ թասակներ,

գ. 2 ռետինե, ոչ պակաս 25 մմ հաստությամբ պահպանիչ օղեր,

դ. վտանգի նշաններ,

ե. բալոնների ծորակների վրա խցափակիչներ՝ լիցքավորման հրահանգներին համապատասխան.

4) բեռնառաքիչը լիցքավորում է բալոնները, անոթները և մասնագիտացված բեռնարկղերը գազերով՝ չգերազանցելով միջպետական ստանդարտներով և տեխնիկական պայմաններով սահմանված չափաքանակները.

5) թունավոր գազերով (ենթադաս 2.2.), թունավոր բոնկվող գազերով (ենթադաս 2.4.) բալոնները և անոթները, ինչպես և այդ գազերի դատարկ բալոնները, փոխադրվում են միայն առանձին վագոններով կամ բեռնարկղերով.

6) գազերով լցված բալոնները բեռնվում են հորիզոնական դիրքով՝ ապահովիչ թասակների միակողմանի ուղղությամբ: Որպես բացառություն առանձին վագոնով

տեղափոխման ժամանակ թույլատրվում է բալոնների բեռնումն առանց պահպանիչ օղերի: Այդ դեպքում յուրաքանչյուր բալոնի շարքը բաժանվում է մյուսից փայտյա ներդիրներով, որոնք ունեն կտրված խոռոչներ բալոնների համար: Արգելվում է օգտագործել որպես ներդիր չոր խոտ, ծղոտ և այլ այրվող և դյուրավառ նյութեր: Գազի բալոններն ուղղահայաց դիրքով թույլատրվում է բարձել միայն բոլոր բալոնների վրա պաշտպանիչ օղերի առկայության դեպքում և կիպ բեռնելու պայմանով, որը բացառում է բալոնների տեղաշարժումը և անկումը: Դռնատեղերը պաշտպանված են ոչ պակաս **40** մմ հաստությամբ տախտակներով՝ բեռի դռան մոտ կիտվածքը բացառելու նպատակով: Բռնկվող գազով (ենթադաս **2.3.**), թունավոր բռնկվող գազով (ենթադաս **2.4.**) բալոնները պառկեցվում և ամրացվում են այնպես, որ բացառվի բալոնների հպումը միմյաց և վագոնների մետաղական մասերին: Ամրացման համար օգտագործվող տախտակները տոգորված են հրդեհապաշտպանիչ նյութով.

7) արգելվում է թթվեցնող գազերի բալոններով (դասակարգման ծածկագրերը **2121, 2243**) բեռնել վագոններ, որտեղ կան հանքային և բուսական յուղերի հետքեր.

8) դատարկ գազի բալոնները (անոթները, մասնագիտացված բեռնարկղերը) փոխադրվում են, որպես վտանգավոր բեռ՝ սեղմված և հեղուկացված գազերի համար նախատեսված պայմաններին համապատասխան: Դատարկ բալոնները (անոթները, մասնագիտացված բեռնարկղերը) բեռնառաքողները փոխադրման ներկայացնելիս բեռնագրի «Բեռի անվանումը» սյունակում նշում են «Բալոններ, անոթներ դատարկ ... (նշում են գազի անվանումը)»: Բալոններում (անոթներում, մասնագիտացված բեռնարկղերում) մնացորդային ճնշումը համապատասխանում է ճնշման տակ աշխատող անոթների կառուցվածքի և անվտանգ շահագործման կանոնների պահանջներին: Դատարկ բալոնները (անոթները, մասնագիտացված բեռնարկղերը) փոխադրվում են կիպ փակված ծորակներով, ներպտուտակած թասակներով, իսկ մանր առաքման դեպքում նրանք ունենում են պիտակ՝ «Դատարկ» գրությամբ.

9) ֆուզենը և կայունացված քլորցիանը, ինչպես նաև դրանց դատարկ տարաները թույլատրվում է փոխադրել միայն հատուկ վագոններով՝ բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ:

19. Դաս 3. Դյուրաբոցավառ հեղուկներն են՝

1) սույն դասի նյութերի գոլորշիացման հատկությունը հիմնական վտանգի աղբյուրն է: Այդ գոլորշիները, խառնվելով օդի հետ, կազմում են պայթյունավտանգ խառնուրդ, որը բոցավառվում է բոցավառման աղբյուրի (բաց կրակի, կայծի) կարճաժամկետ ազդեցության ներքո: Սույն հեղուկների գոլորշիները կարող են ունենալ թմրադեղային հատկություններ: Որոշ հեղուկներ և դրանց գոլորշիները խիստ վտանգավոր քիմիական նյութեր են՝

2) խիստ թունավոր և քայքայիչ դյուրավառ հեղուկները (դասակարգման ծածկագրեր **3121, 3122, 3221, 3222, 3231, 3241, 3242, 3343**) փոխադրվում են միայն առանձին վագոններով.

3) ակրիլանիտրիլը, ծծմբաածխածինը, էթիլմերկապտանը, իզոպրոպիլնիտրատը, սամինը, ինչպես նաև այդ բեռների դատարկ տարան տեղափոխվում են միայն մասնագիտացված կամ բեռնառաքիչի (բեռնստացողի) վարձակալած վագոններով: Այդ բեռների փոխադրման համար նախատեսված վագոնները ներկված են դեղին գույնով: Նշյալ բեռները ներկայացվում են փոխադրման ստանդարտ, հերմետիկ, կապարակնքված տակառներով: Տակառները վագոն են բեռնվում խցաններով վեր, միայն մեկ հարկաբաժնով: Իզոպրոպիլնիտրատի և սամինի փոխադրման համար նախատեսված վագոններն ինչպես բեռնված, այնպես էլ դատարկ վիճակում ուղեկցվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ.

4) փակ վագոններով փոխադրման ենթակա է միայն մաքուր մեթանոլը՝ ապակյա տարայով և փաթեթավորումով, ինչը նախատեսված է տվյալ արտադրանքի համար՝ տեխնիկական պայմաններով: Մեթանոլի փոխադրումը կատարվում է մասնագիտացված

կամ բեռնառաքողի (բեռնստացողի) կողմից վարձակալված վագոններով: Դռան վրա՝ կենտրոնում, վտանգի նշանի տակ գրվում է «Մեթանոլ»: Վագոնները կահավորվում են բեռնառաքողի կողմից մշտական երեսարկմամբ՝ բեռը երկհարկաբաժնով փոխադրման համար և ներկվում են դեղին գույնով: Տարայի պատահական վնասման դեպքում բեռի արտահոսքը վագոնից կանխելու նպատակով վագոնի հատակը մինչև բեռնելը ծածկվում է ոչ պակաս, քան **100** մմ հաստություն ունեցող չոր ավազի շերտով: Վագոնից դուրս ավազի հոսքը կանխելու նպատակով վագոնում ամբողջ հատակի պարագծով՝ ներառյալ միջողնային տարածությունը, կիպ մեխվում կամ այլ կերպ կոշտ ամրացվում են **150** մմ բարձրությամբ շերտաձողեր:

5) տարայով բենզին տեղափոխելիս բեռնառաքողը բեռնագրի «Ապրանքի անվանումը» սյունակում նշում է «Շարժիչային բենզին, ոչ էթիլացվաց» կամ «Էթիլացված բենզին»: Էթիլացված բենզինի փոխադրումը տարայով թույլատրվում է միայն բեռն ընդունող երկրի իրավասու սանիտարային մարմնի թույլտվության ակտայության դեպքում:

6) լումինալ A-ն, հեպտիլը, T-185 նյութը, դիրան A-ն, ինչպես նաև այդ պատրաստվածքներից ազատված տարան թույլատրվում է փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված վագոններով: Այդ բեռի վագոններն ինչպես բարձված, այնպես էլ դատարկ, փոխադրվում են միայն բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ: Նշված բեռները փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված անոթներով:

7) «Սինտին» պլաստիկատորը թույլատրվում է փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնստացողի) կամ նրանց վարձակալած մասնագիտացված վագոններով:

8) պեստիցիդները, որոնք ընդգրկված են **3**-րդ վտանգավորության դասում, փոխադրվում են **22**-րդ կետով սահմանված պայմաններով:

20. Դաս 4. Դյուրավառ պինդ, ինքնաբռնկվող և ջրի հետ փոխազդեցության հետևանքով բռնկվող գազեր արտանետող նյութերն են՝

1) սույն դասի միներալները և նյութերն ընդունակ են փոխադրման ընթացքում հեշտ բռնկվել արտաքին բռնկման աղբյուրներից, ջրի կամ օդի խոնավության հետ համագործակցելիս, կամայական քիմիական ռեակցիաներից և տաքացումից.

2) դաս 4-ի բեռները բաժանվում են երեք ենթադասի՝

ա. 4.1՝ դյուրավառ պինդ նյութեր,

բ. 4.2՝ ինքնաբռնկվող նյութեր,

գ. 4.3՝ նյութեր, որոնք ջրի հետ փոխազդեցության հետևանքով արտանետում են բռնկվող գազեր:

Յուրաքանչյուր ենթադասի համար սահմանված է իր վտանգի նշանը:

21. Ենթադաս 4.1. Դյուրավառ պինդ նյութերն են՝

1) ենթադաս 4.1-ին պատկանում են՝

ա. դյուրավառ պինդ նյութերը, որոնք ընդունակ են բռնկվել ցածր էներգիայով օժտված (կայծ, մոմի բոց, չմարված ծխախոտ և այլն) բռնկման աղբյուրի կարճաժամկետ (մինչև 30 վ) ազդեցությունից,

բ. ինքնաքայքայվող նյութերը, որոնք ընդունակ են էկզոթերմիկ քայքայման՝ առանց օդի ներթափանցման, և որոնց քայքայման ջերմաստիճանը չի գերազանցում 65°C,

գ. պինդ նյութերը և արտադրատեսակները, որոնք բռնկվում են շփումից.

2) դյուրավառ, պայթյունավտանգ պինդ նյութերը (դասակարգման ծածկագիր 4172) փոխադրման են ներկայացվում միայն հերմետիկ տարաներով,

3) կինոֆիլմերը, կինոժապավենները, ֆոտոժապավենները երկաթուղով փոխադրման համար փաթեթավորվում են հետևալ կերպ՝ յուրաքանչյուր ժապավենի գլանափաթեթը տեղավորվում է սպիտակ մետաղից թիթեյա տուփի մեջ, որը կիպ փակվում է կափարիչով: Տուփերը կիպ տեղավորվում են մետաղյա արկղի մեջ և ծածկվում կափարիչով: Արկղերը կապարակնքվում են բեռնառաքողի կողմից: Առաքմանը ներկայացվող հրդեհաանվտանգ (ացետատային և եռացետատային) ժապավենների և նեղ ժապավեններով կինոֆիլմերի

առաքման դեպքում առաքողներն այդ նշում են բեռնագրում: Տարայի վրա պարզ գրվում է «Կլինոժապավեն» կամ «Ֆոտոժապավեն», «Հրդեհասանվտանգ»:

4) ցելուլոզիդ պատրաստվածքները թույլատրվում է փոխադրել բազմաֆունկցիոնալ բեռնարկղերով: Անվտանգ լուցկին թույլատրվում է փոխադրել մանր առաքանիներով՝ միայն նրբտախտակյա արկղերով, փաթեթավորված տեսքով:

5) ծծումբը բազմաֆունկցիոնալ բեռնարկղերով և փակ վագոններով փոխադրվում է տրանսպորտային տարաներով:

6) դասակարգման 4113 ծածկագրով (բամբակը, բամբակե թելքը, ջուր թելքը, սանդերքված վուշը, չոր քրնենը, բամբակը, մագաքուքը, խծուծը, սանդերքված կանեփաթելը, մղեղը, չորացված մամլած խոտը, մամլված ծղոտը) դյուրավառ նյութերը փոխադրվում են համաձայն կարգի:

22. Ենթադաս 4.2. Ինքնաբռնկվող նյութերն են՝

1) ենթադաս 4.2-ին պատկանում են՝

ա. հրակիր նյութերը (նյութեր, որոնք արագ բռնկվում են օդում),

բ. այլ նյութեր, որոնք ընդունակ են ինքնակամ, առանց միջնորդության տաքանալ ընդհուպ մինչև բռնկումը: Որոշ նյութերի բոցավառման ունակությունն աճում է խոնավացման, ինչպես նաև օդի խոնավության հետ փոխազդեցության հետևանքով:

2) կենդանաբուսական ծագումով նյութերը (դասակարգային ծածկագրեր 4212, 4213) փոխադրվում են միայն առանձին վագոններով և բեռնարկղերով: Առանց տարայի քուսպը փոխադրելիս վագոնները մինչ բեռնելը մաքրվում, լվացվում և չորացվում են: Բեռնառաքողները միջոցներ են ձեռնարկում բեռը խոնավացումից պահպանելու համար: Քուսպի ջերմաստիճանը բարձրման ընթացքում չպետք է գերազանցի 30°C ջերմաստիճանը:

3) դեղին ֆոսֆորի առաքման դեպքում բեռնառաքողը փաթեթավորում է այն ստանդարտ մետաղական հերմետիկ տակառներում կամ բանկաներում նախապես լցված ջրով, կամ երթուղին 0°C-ից ցածր օդի ջերմաստիճան ունեցող շրջաններով անցնելու դեպքում

օգտագործում է չսառչող կայցիումի քլորիդի լուծույթ: Ֆոսֆորով տակառները կապարակնքվում են: Բանկաները գողվում և լրացուցիչ կիպ տեղադրվում են փայտե կափարիչներ ունեցող արկղերում: Ֆոսֆորով տակառները տեղաբաշխվում են վագոնում մեկ հարկաբաժնով և պարտադիր խցաններով վեր:

23. Ենթադաս 4.3. Ջրի հետ փոխազդեցության հետևանքով բռնկվող գազեր արտանետող նյութերն են`

1) սույն դասի նյութերի վտանգավորությունը կապված է օդի խոնավության, ջրային լուծույթների կամ ջրի հետ դրանց փոխազդեցության հետևանքով բռնկվող գազերի և ջերմություն արտանետելու ունակության հետ, որը որոշ դեպքերում բավական է գազի բռնկման համար.

2) կատալիզատորը և դրա օգտագործված դատարկ տարան փոխադրվում են միայն բեռնառաքողի մասնագիտացված իգորթերմիկ վագոններով: Ինչպես այդ բեռներով բեռնված, այնպես էլ դատարկ վագոնները, փոխադրվում են միայն բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ,

3) սիլանքլորիդները (դասակարգային ծածկագիր **4361**), ինչպես նաև դրանց օգտագործված դատարկ տարան, փոխադրվում են միայն բեռնառաքողի (բեռնստացողի) սեփական վագոններով կամ նրանց կողմից վարձակալված վագոններով: Սույն բեռները փոխադրվում են ստանդարտ, հերմետիկ, կապարակնքված տակառներով: Տակառները տեղաբաշխվում են վագոններում մեկ հարկաբաժնով և պարտադիր խցաններով վեր:

24. Դաս 5. Թթվեցնող նյութերն ու օրգանական պերօքսիդներն են`

1) սույն դասի նյութերը արտանետում են թթվածին, որը պատճառ է դառնում այրվող նյութերի ինքնաբռնկմանը, նպաստում է նրանց այրմանը, ավելացնում է հրդեհի ինտենսիվությունը, այլ նյութերի հետ համատեղ կազմում է պայթյունավտանգ խառնուրդներ.

2) 5-րդ դասի բեռները բաժանված են երկու ենթադասի`

ա. 5.1` թթվեցնող նյութեր,

բ. 5.2՝ օրգանական պերօքսիդներ, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված է իր վտանգի նշանը:

25. Ենթադաս 5.1. Թթվեցնող նյութերն են՝

1) ենթադաս 5.1-ի նյութերի հիմնական վտանգը կայանում է նրանում, որ դրանք այրվող նյութերի հետ համատեղ կազմում են բռնկվող և պայթյունավտանգ խառնուրդներ: Հատկապես, երբ վերջիններս գտնվում են փուխր վիճակում (փայտի թեփ, հնոտի, ծղոտ, մետաղի փոշի, ծծումբ և այլն).

2) արգելվում է տարբեր մակնիշների ամոնյակային բորակի, ինչպես նաև ամոնյակային սելիտրայի և այլ վտանգավոր և անվտանգ բեռների համատեղ փոխադրումը.

3) ենթադաս 5.1-ի բեռների փոխադրման համար նախատեսված վազոնները մանրակրկիտ մաքրվում են փոխադրված բեռների մնացորդներից, փոշուց կամ լվացվում են, որպեսզի մաքրվեն հանքային կամ բուսական յուղերի հետքերից.

4) ամոնիումի պերքլորատը, անոզիտը, ինչպես նաև նրանց օգտագործված դատարկ տարան, թույլատրվում է փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնաստացողի) կողմից վարձակալված կամ նրա սեփական մասնագիտացված վազոններով: Ջրածնի պերօքսիդի 60%-անոց լուծույթը թույլատրվում է փոխադրել բեռնառաքողի (բեռնաստացողի) մասնագիտացված վազոններով: Ամոնիումի պերքլորատի, անոզիտի և ջրածնի պերօքսիդի 60%-անոց լուծույթի փոխադրումը կատարվում է միայն բեռնառաքողի (բեռնաստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ.

5) բուտիլի երրորդային հիդրոպերօքսիդը, ինչպես նաև ճարպային թթուների պերօքսիդները յուղային լուծույթում թույլատրվում է փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնաստացողի) սեփական փակ իզոթերմիկ վազոններով, ամառային ժամանակաշրջանում ջերմաստիճանի կարգավորմամբ, իսկ տարվա ցուրտ եղանակին նաև բեռնառաքողի (բեռնաստացողի) կողմից վարձակալված վազոններով, երբ երթուղու ամբողջ երկարությամբ օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան կարգավորման ջերմաստիճանը: Սույն բեռների

փոխադրումն իրականացվում է միայն բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների ուղեկցությամբ:

26. Ենթադաս 5.2. Օրգանական պերօքսիդներն են`

1) ենթադաս 5.2-ի նյութերը մեծամասամբ այրվող են, գործում են որպես թթվեցուցիչներ և, բացի դրանից, ունեն դյուրաբռնկման հատկություններ, ունակ են ինքնակամ պայթյունով քայքայվել` արտանետելով մեծ քանակությամբ ջերմություն, զգայուն են հարվածին և շփմանը: Պերօքսիդային միացությունները` հատկապես հեղուկի և մածուկի, աչքի մեջ ընկնելու դեպքում հանգեցնում են աչքերի ուժեղ անվերադարձ վնասմանը, իսկ մաշկի վրա առաջացնում են այրվածքներ.

2) ջերմաստիճանի կարգավորում պահանջող օրգանական պերօքսիդները (դասակարգային ծածկագրերը **5212, 5222**) փաթեթավորվում են հատուկ կահավորված օդային փականներով տարաներում: Ենթադաս 5.2-ի այլ բեռներ փոխադրվում են հերմետիկ տարաներով.

3) աչքերի համար վտանգավոր օրգանական պերօքսիդների փաթեթավորման վրա ավելացվում է լրացուցիչ գրություն «Խուսափիր աչքերի այրվածքից».

4) արգելվում է օրգանական պերօքսիդների համատեղ փոխադրումը բոլոր վտանգավոր և անվտանգ բեռների հետ: Ջերմաստիճանի կարգավորում պահանջող օրգանական պերօքսիդները (դասակարգային ծածկագրեր` **5212, 5222**) փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված իգոթերմիկ վագոններով: Ենթադաս 5.2-ի այլ բեռներ, ինչպես նաև դրանց օգտագործված դատարկ տարան, փոխադրվում են միայն բեռնառաքողի (բեռնստացողի) սեփական կամ նրանց կողմից վարձակալված վագոններով: Սույն բեռների համար օգտագործվող վագոնները բեռնառաքողը ներկում է մոխրագույն գույնով: Օրգանական պերօքսիդներով բարձրված կամ դրանց դատարկված վագոնները փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ:

27. Դաս 6. Վտանգավոր քիմիական և վտանգավոր կենսաբանական նյութերն են`

1) սույն դասի նյութերը, մաշկի հետ հպումից կամ օդի միջոցով ներս թափանցելով, կարող են առաջացնել թունավորումներ և հիվանդություններ:

Դաս 6-րդի վտանգավոր նյութերը բաժանված են երկու ենթադասի`

ա. ենթադաս 6.1-ին պատկանում են վտանգավոր քիմիական նյութերը,

բ. 6.2-ին` վտանգավոր կենսաբանական նյութերը: Ենթադաս 6.2-ի նյութերը սույն կարգում չեն դիտարկվում:

28. Ենթադաս 6.1. Վտանգավոր քիմիական նյութերն են`

1) ենթադաս 6.1-ի բեռների վտանգավորությունը կայանում է նրանում, որ բեռի հետ անզգույշ վերաբերմունքը կարող է հանգեցնել թունավորումների, հիվանդությունների և նույնիսկ մարդկանց ու կենդանիների մահվան: Հատկապես արագ ցնդող հեղուկները (նրանց գոլորշիների ներշնչումը) առավել վտանգավոր են: Ենթադաս 6.1-ի բոլոր նյութերը կուլ տալու դեպքում վտանգավոր են, դրանցից շատերը մաշկի վրա ընկնելիս վնասակար ազդեցություն են գործում:

2) կուպրը և անտրացենը փոխադրվում են փայտյա տակառներով կամ արկղերով: Քարածխային և նավթային կուպրի փոխադրումն առանց տարայի թույլատրվում է միայն բաց վագոններով: Կուպրի բարձումը, բեռնաթափումը և պահպանումն առանց տարայի ընդհանուր օգտագործման տեղերում չի իրականացվում:

3) էթիլային հեղուկը, ացետոնցիանհիդրինը և մկնդեղի **As (!!!)** օքսիդն ուժեղ թույներ են: Դրանք հատկապես վտանգավոր են նրանով, որ դրանց թունավորող գործողությունն ի հայտ է գալիս ոչ անմիջապես և թունավորման սկզբնական շրջանում աննկատելի է տուժողի համար: Այդ բեռները և դրանց փոխադրման համար օգտագործված դատարկ տարաները թույլատրվում է փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնստացողի) սեփական կամ նրանց կողմից վարձակալված վագոններով: Բեռնառաքողները ներկում են վագոնները դեղին գույնով: Էթիլային հեղուկի համար օգտագործվող վագոնների դռան վրա, վտանգի նշանի տակ գրվում է «Վագոնը բեռնել միայն էթիլային հեղուկով»: Սույն բեռները փոխադրում

են միայն ստանդարտ, հերմետիկ և կապարակնքված տակառներով: Էթիլային հեղուկի և ացետոնցիանհիդրիների տակառները տեղաբաշխվում են վագոնում մեկ հարկաբաժնով և պարտադիր խցաններով վեր: Էթիլային հեղուկը և մկնդեղի **As (!!!)** օքսիդը փոխադրվում են միայն բեռնառաքողի (բեռնստացողի) աշխատողների ուղեկցությամբ.

4) ամիդոլը, ակվանիտը, ցիանիդները, ինչպես նաև կապտաթթուն, ցինխոնինը, ստրիխնինը, սնդիկի երկքլորիդը, բնական կինոբարը և դրանց օգտագործված դատարկ տարան թուլատրվում է փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված փակ վագոններում: Դրանցով բեռնված և դատարկ վագոնները փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադի ուղեկցությամբ: Ամիդոլը փոխադրվում է բեռնառաքողի (բեռնստացողի) հերմետիկ տարաներում՝ ազոտային բարձիներքո: Այդ նյութով տարողությունները թուլատրվում է փոխադրել հատուկ կահավորված սույն տարողությունների տեղաբաշխման և ամրացման համար հարթակային վագոններով.

5) Էնիտը, պրոպիտը, ինչպես նաև դրանց օգտագործված դատարկ տարաները, փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) հատուկ կահավորված փակ վագոններով: Էնիտի և պրոպիտի փոխադրումը թուլատրվում է մասնագիտացված բեռնարկղերով (անոթներով): Բեռնված վագոնները, ինչպես նաև օգտագործված դատարկ տարան և մասնագիտացված բեռնարկղերը (տարաները), օգտագործված բեռի մնացորդների առկայության դեպքում փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) աշխատողների ուղեկցությամբ.

6) գյուղատնտեսության համար պեստեցիդները, ինչպես նաև դրանց օգտագործված դատարկ տարան, փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) սեփական կամ նրանց կողմից վարձակալված վագոններով: Բեռնառաքողի կողմից վագոնները ներկվում են դեղին գույնով: Դռների վրա, վտանգի նշանից վերև գրվում է «Պեստեցիդներ», իսկ վտանգի նշանի տակ գրվում է «Այլ բեռներով չբեռնել»:

29. Դաս 7. Ռադիոակտիվ նյութերն են (բացառությամբ տրոհվողներից)՝

1) սույն կարգը տարածվում է այն ռադիոակտիվ նյութերի փոխադրման կանոնների վրա, որոնց տեսակարար ռադիոակտիվությունը գերազանցում է **0,002** միկրոկյուրի/գ և որոնց գումարային ռադիոակտիվությունը գերազանցում է թույլատրելին.

2) եթե գումարային ռադիոակտիվությունը պակաս է թույլատրելի արժեքներից, և տեսակարար ռադիոակտիվությունը փոքր է **0.002** միկրոկյուրի/գ-ից, ապա բեռի փոխադրումը կատարվում է անվտանգ բեռի փոխադրման կարգով: Այդ դեպքում բեռնառաքողը բեռը ներկայացնում է տարայով, որը բացառում է ռադիոակտիվ նյութերի արտահոսքը շրջապատող միջավայր: Ընդ որում, փաթեթավորման մակերևույթի վրա ճառագայթման հզորությունը չի գերազանցում **0,3** Մ բեռ/ժ-ն: Նման փաթեթավորման կափարիչի ներքին մակերևույթի վրա դրվում է ռադիոկտիվության վտանգի նշան.

3) ռադիոակտիվ նյութերի փոխադրման պայմանների որոշման, տարայի և պիտակավորման գործող միջպետական ստանդարտներին և սույն կարգին համապատասխանելիության համար ամբողջ պատասխանատվությունը կրում է բեռնառաքողը.

4) ռադիոակտիվ նյութերը փոխադրվում են տրանսպորտային փաթեթավորող լրակազմերով, որոնք ապահովում են անվտանգությունը և ճառագայթումից պաշտպանությունը փոխադրման ընթացքում: Տրանսպորտային լրակազմերն ապահովում են նաև ռադիոակտիվ նյութերի պահպանությունը և խոչնդոտում են դրանց արտահոսքը շրջապատող միջավայր: Տրանսպորտային փաթեթավորող լրակազմերը լինում են երկու տեսակի`

ա. Ա տիպի լրակազմն օժտված է մեխանիկական ամրությամբ, որը բացառում է ռադիոակտիվ նյութերի կորուստը և ցրումը, ինչպես նաև փոխադրման նորմալ պայմաններում ապահովում է գործունյա պաշտպանություն ճառագայթումից,

բ. Բ տիպի լրակազմն օժտված է ավելացված մեխանիկական ամրությամբ և ջերմադիմացկունությամբ, որը բացառում է ռադիոակտիվ նյութերի կորուստը և ցրումը, ինչպես նաև ապահովում է պաշտպանություն ճառագայթումից հնարավոր վթարների դեպքում, որոնք ուղեկցվում են ջերմաստիճանային ներգործությամբ.

5) ռադիոակտիվ նյութեր պարունակող փաթեթավորումի քաշը 5 կգ-ից ոչ պակաս է, և փաթեթավորման արտաքին տրամագիծը ոչ պակաս, քան **0,1մ**.

6) արգելվում է փոխադրել ռադիոակտիվ նյութեր ոչ սերիական գործարանային փաթեթավորումներով.

7) փաթեթավորող լրակազմի արտաքին մակերևույթն ունենում է պիտակավորում.

8) այլ վտանգներ պարունակող ռադիոակտիվ նյութերի փաթեթավորումներն օժտված են լրացուցիչ վտանգի նշաններով:

30. Դաս 8. Այրող և (կամ) քայքայիչ նյութերն են`

1) դաս 8-րդի նյութերի հիմնական վտանգավորությունը պայմանավորված է դրանց քայքայող ազդեցությամբ տարբեր նյութերի վրա և կենդանի հյուսվածքը վնասելու ունակությամբ: Այդ նյութերի փոշին և գոլորշիները, օրգանիզմ ներթափանցելով, կարող են թունավորման պատճառ հանդիսանալ: Դաս 8-ի մի շարք բեռներ օժտված են թթվեցնող հատկություններով, այսինքն կարող են հանգեցնել այրվող նյութերի բռնկմանը.

2) արգելվում է այրող նյութերը, որոնք ունակ են կազմել ինքնաբռնկվող խառնուրդներ (դասակարգային ծածկագրեր **8152, 8121, 8321**), փաթեթավորել չոր խոտի, ծղոտի, փայտի տաշեղի և այն նյութերի կիրառմամբ, որոնք տոգորված չեն հակահրդեհային լուծույթով.

3) ամիլը, ամիլինը և մելանժը, ինչպես նաև դրանց օգտագործված դատարկ տարաները, թույլատրվում են փոխադրել միայն բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված վագոններով: Սույն բեռների ինչպես բեռնված, այնպես էլ դատարկ վագոններն ուղեկցվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագետների բրիգադով: Տվյալ բեռները փոխադրվում են բեռնառաքողի (բեռնստացողի) մասնագիտացված տարաներով.

4) հերմտիկ փակված պողպատե բալլոններում սնդիկը և դրա օգտագործված դատարկ տարաները փոխադրվում են մանր առաքանիներով բեռնառաքողի (բեռնստացողի) կողմից կապարակնքված մասնագիտացված արկղային տակդիրներով:

31. Դաս 9. Այլ վտանգավոր նյութերն են`

1) դաս 9-րդի վտանգավոր բեռները բաժանվում են երկու ենթադասի՝

ա. ենթադաս 9.1-ին պատկանում են այն բեռները, որոնք չեն ընդգրկվել 1-8-րդ դասերում,

բ. ենթադաս 9.2-ին պատկանում են այն բեռները, որոնց վտանգավորության տեսակներն ի հայտ են գալիս միայն ջրային տրանսպորտով խուռնաբեռ փոխադրման դեպքում: Ենթադաս 9.2-ի բեռները սույն կարգում չեն դիտարկվում:

32. Ենթադաս 9.1. 1-8-րդ դասերին չպատկանող վտանգավոր բեռները՝

1) ենթադաս 9.1-ի նյութերի վտանգավորությունը կայանում է դրանց՝ որոշ պայմաններում (չափից ավելի բարձր շրջապատող օդի ջերմաստիճանը, հրդեհի տարածքում բեռի հայտնվելը, բռնկման աղբյուրների երկարատև ներգործությունը) բռնկվելու ունակությամբ: Սույն նյութերը խոնավացման դեպքում կարող են ձերք բերել քայքայիչ հատկություններ պողպատի, ալյումինի և այլ մետաղների նկատմամբ: Դրանք կարող են խոնավ մաշկի այրվածքների և բորբոքումների պատճառ հանդիսանալ, ինչպես նաև օրգանիզմի վրա վնասակար ներգործություն ունենալ դրանց նկատմամբ ոչ ճիշտ վերաբերվելու պատճառով (աշխատանք առանց անհատական պաշտպանիչ միջոցների, պահեստավորում համատեղ սննդամթերքի հետ): Դիտարկված նյութերը կրակի մեջ ընկնելիս կարող են արձակել թունավոր գազեր.

2) աերոզոլների անոթները (դասակարգման ծածկագիր 9113) կահավորվում են պաշտպանիչ թասակներով, որոնք պաշտպանում են փականները պատահական գործարկումից: Աերոզոլների ապակե անոթները հարվածներից պաշտպանելու նպատակով գործող միջպետական ստանդարտներին և տեխնիկական պայմաններին համաձայն լրացուցիչ փաթեթավորում են պատյաններում:

IV. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ
ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ

33. Համաձայն ֆիզիկաքիմիական հատկությունների և վտանգի տեսակի՝ վտանգավոր բեռները փոխադրելիս բաժանվում են ենթադասերի, որոնք ներկայացված են **N 1** աղյուսակում:

Վտանգավոր բեռների բաժանումն ըստ դասերի և ենթադասերի

Աղյուսակ **N 1**

Դասը	Ենթադասը	Ենթադասի անվանումը
1.	1.1. 1.2. 1.3. 1.4. 1.5. 1.6.	զանգվածային պայթուռի վտանգավորությամբ պայթավտանգ նյութեր զանգվածային չպայթող պայթավտանգ նյութեր հրդեհավտանգ զանգվածով չպայթող պայթավտանգ նյութեր զգալի վտանգ չներկայացնող պայթավտանգ նյութեր վերին աստիճանի անզգա պայթավտանգ նյութեր չափազանց ցածր զգայունությամբ պայթավտանգ նյութեր վերին աստիճանի անզգա պատրաստվածքներ
2.	2.1. 2.2. 2.3. 2.4.	չբռնկվող ոչ թունավոր գազեր թունավոր գազեր բռնկվող (այրվող) գազեր թունավոր և բռնկվող գազեր
3.	3.1. 3.2. 3.3.	դյուրավատ հեղուկներ՝ փակված մամլասալում մինուս 18°C -ից ցածր բռնկման ջերմաստիճանով դյուրավատ հեղուկներ, որոնց բռնկման ջերմաստիճանը փակված մամլասալում ոչ պակաս է մինուս 18°C -ից, բայց ոչ ավելի 23°C -ից դյուրավատ հեղուկներ, որոնց բռնկման ջերմաստիճանը փակված մամլասալում բարձր է 23°C -ից, բայց ոչ ավելի 61°C -ից
4.	4.1. 4.2. 4.3.	դյուրավատ պինդ նյութեր ինքնաբռնկվող նյութեր նյութեր, որոնք արտանետում են բռնկվող գազեր ջրի հետ համագործակցելիս
5.	5.1. 5.2.	թթվեցնող նյութեր օրգանական պերօքսիդներ
6.	6.1. 6.2.	վտանգավոր քիմիական նյութեր վարակիչ նյութեր
7.	-	ռադիոակտիվ նյութեր
8.	8.1. 8.2. 8.3.	այրիչ և (կամ) կոռոզիոն նյութեր, որոնք ունեն թթվային հատկություններ այրիչ և (կամ) կոռոզիոն նյութեր, որոնք ունեն ալկալիական հատկություններ տարբեր այրիչ և (կամ) կոռոզիոն նյութեր
9.	9.1.	վտանգավոր բեռներ, որոնք չեն պատկանում 1-8 -րդ դասերին

34. Վտանգավոր բեռների **1**-ին դասին պատկանում են պայթավտանգ նյութերը և պատրաստվածքները, հրատեխնիկական նյութերը և պատրաստվածքները:

Դաս 1-ի վտանգավոր բեռները բաժանվում են 6 ենթադասերի:

Ենթադաս 1.1-ին պատկանում են պայթավտանգ և հրատեխնիկական նյութերը և պատրաստվածքները, որոնք ունակ են պայթել զանգվածով:

Ենթադաս 1.2-ին պատկանում են պայթավտանգ և հրատեխնիկական նյութերը և պատրաստվածքները, որոնք չեն պայթում զանգվածով, սակայն ունակ են պայթյունի դեպքում ցրվել և զգալի վնաս պատճառել շրջապատող առարկաներին:

Ենթադաս 1.3-ին պատկանում են պայթավտանգ և հրատեխնիկական նյութերը և պատրաստվածքները, որոնք այրման ընթացքում արձակում են մեծ քանակի ջերմություն կամ բռնկվում են մեկը մյուսի հետևից՝ պայթյունի կամ ցրման (ինչպես նաև երկուսը միասին) ոչ զգալի էֆեկտով:

Ենթադաս 1.4-ին պատկանում են պայթավտանգ և հրատեխնիկական այն նյութերը և պատրաստվածքները, որոնք ներկայացնում են ոչ զգալի վտանգ փոխադրման ընթացքում՝ միայն բռնկման կամ հրահրման դեպքում: Պայթյունի գործողությունը սահմանափակվում է փաթեթավորումով: Արտաքին հրահրման աղբյուրը չպետք է պատճառ դառնա փաթեթավորման պարունակության ակնթարթային պայթմանը:

Ենթադաս 1.5-ին պատկանում են զանգվածային պայթյունի վտանգով պայթավտանգ նյութեր, որոնք այնքան անզգայուն են, որ փոխադրման ընթացքում չպետք է կայանա դրանց հրահրումը, կամ այրումը չպետք է պատճառ դառնա դրաց ճայթմանը: Սույն ենթադասին պատկանում են նաև պատրաստվածքները, որոնք պարունակում են միայն շատ անզգայուն ճայթող նյութեր:

Ենթադաս 1.6-ին պատկանում են պատրաստվածքները, որոնք պարունակում են միայն բացառիկ անզգայուն ճայթիչ նյութեր: Սույն ենթադասում ընդգրկված են պատրաստվածքներ, որոնք պարունակում են ճայթմանը բացառիկ անզգայուն նյութեր և բնութագրվում են չնչին ճայթման կամ պայթյունի տարածման հավանականությամբ:

Յուրաքանչյուր ենթադասում պայթավտանգ նյութերը, կախված հատկություններից, նշանակումից և համատեղ փոխադրման հնարավորություններից, բաժանվում են համատեղելիության խմբերի, որոնք նշանակված են **A**-ից մինչև **N** տառերով, ինչպես նաև **S** տառով:

Դաս **1**-ի վտանգավոր բեռների դասակարգման ծածկագիրը կազմված է դասի, ենթադասի և համատեղելիության խմբի համարներից:

Միևնույն վագոնում և նույն բեռնարկղում թույլատրվում են հետևյալ համատեղ փոխադրումները`

ա. միևնույն համատեղելիության խմբի և միևնույն ենթադասի համարով վտանգավոր բեռների փոխադրումը,

բ. միևնույն համատեղելիության խմբի, բայց տարբեր ենթադասերի վտանգավոր բեռների փոխադրումը (համաձայն փոխադրմանը ներկայացվող պահանջների, որոնք սահմանված են ենթադասի ավելի ցածր համար ունեցող բեռի համար, որտեղ **1.5** ենթադասի բեռները հավասարեցվում են **1.1** ենթադասի բեռներին),

գ. համատեղելիության **C, D** և **E** խմբերի բեռների փոխադրումը` համաձայն փոխադրմանը ներկայացվող պահանջների, որոնք սահմանված են ենթադասի ավելի ցածր համար ունեցող բեռի համար, որն ընդգրկված է **E** համատեղելիության խմբում (եթե տեղափոխվում է այդ խմբի բեռը) կամ **C**-ում,

դ. համատեղելիության **S** խմբի բեռների փոխադրումը համատեղ այլ համատեղելիության խմբերի բեռների հետ, բացի **A** և **L** խմբերի,

ե. համատեղելիության **L** խմբի բեռները չպետք է համատեղ փոխադրվեն այլ համատեղելիության խմբերի բեռների հետ: Առավել ևս, **L** խմբի բեռների համատեղ փոխադրումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դրանք պատկանում են միևնույն տեսակին,

զ. համատեղելիության N խմբի բեռները, որպես կանոն, չպետք է փոխադրվեն այլ համատեղելիության խմբերի բեռների հետ՝ բացառությամբ S խմբի բեռների,

է. սակայն, եթե նման բեռները փոխադրվում են համատեղ C,D և E համատեղելիության խմբերի բեռների հետ, ապա N խմբի բեռները դիտարկվում են որպես D խմբի բեռներ:

Համատեղելիության պայմաններում լրացումներ կատարելու առաջարկությունների ներկայացման դեպքում նշյալ պահանջները խստորեն պահպանվում են:

Պայթուցիկ նյութերի համատեղելիության խմբի որոշումը կատարվում է համաձայն N 2 աղյուսակի վտանգավոր բեռների (դաս 1) դասակարգման աղյուսակ:

Աղյուսակ N
2

Համատեղելիության խումբը	Նյութի, պատրաստվածքի անվանումը	Ենթադասերում դասակարգման ծածկագիրը					
		1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6
1	2	3	4	5	6	7	8
A	հարուցող պայթավտանգ նյութեր	1.1A	-	-	-	-	-
B	հարուցող պայթավտանգ նյութեր և 2-ից ոչ պակաս ապահովիչ սարքավորումներ պարունակող պատրաստվածքներ	1.1B	1.2B	-	1.4B	-	-
C	նետող պայթավտանգ նյութեր կամ այլ դեֆլագրացող պայթավտանգ նյութեր ինչպես նաև դրանք պարունակող պատրաստվածքներ	1.1C	1.2C	1.3C	1.4C	-	-

D	երկրորդային ճայթիչ պայթավտանգ նյութեր, ծխատու վարոտ, ճայթիչ պայթավտանգ նյութեր պարունակող, սակայն առանց հարուցիչ միջոցների և նետվող լիցքերի պատրաստվածքներ հարուցող պայթավտանգ նյութեր պարունակող և երկու կամ ավելի անկախ ապահովող սարքավորումներով օժտված պատրաստվածքներ	1.1D	1.2D	-	1.4D	1.5D	-
E	Երկրորդային ճայթիչ պայթավտանգ նյութեր պարունակող պատրաստվածքներ առանց հարուցիչ միջոցների, բայց նետվող լիցքերով (բացառությամբ հիպերգոլական դյուրավառ հեղուկ պարունակողների)	1.1E	1.2E	-	1.4E	-	-
F	երկրորդային ճայթիչ պայթավտանգ նյութեր, ինչպես նաև հարուցիչ միջոցներ և նետվող լիցքեր պարունակող պատրաստվածքներ (բացառությամբ հիպերգոլական, դյուրավառ հեղուկ կամ դոնդող պարունակողներից) կամ առանց նետվող լիցքերի	1.1F	1.2F	1.3F	1.4F	-	-
G	հրատեխնիկական նյութեր կամ հրատեխնիկական նյութեր պարունակող պատրաստվածքներ, ինչպես լուսավորող, վառիչ, արտասվաբեր և ծխաբեր, այնպես էլ պայթավտանգ նյութեր պարունակող պատրաստվածքներ (բացառությամբ ջրակալիվացվող պատրաստվածքներից կամ սպիտակ ֆոսֆոր, ֆոսֆիդներ, պիրոֆոր նյութեր, դյուրավառ հեղուկներ կամ դոնդող պարունակող պատրաստվածքներից)	1.1G	1.2G	1.3G	1.4G	-	-

H	սպիտակ ֆոսֆոր և պայթա- վտանգ նյութեր պարու- նակող պատրաստվածքներ	-	1.2H	1.3H	-	-	-
J	դյուրավառ հեղուկներ, դոն- դող և պայթավտանգ նյու- թեր պարունակող պատ- րաստվածքներ	1.1J	1.2J	1.3J	-	-	-
K	վտանգավոր քիմիական և պայթավտանգ նյութեր պա- րունակող պատրաստվածք- ներ	-	1.2K	1.3K	-	-	-
L	հատուկ վտանգավորություն ունեցող պայթավտանգ նյութեր կամ պայթավտանգ նյութեր պարունակող պատ- րաստվածքներ (օրինակ, ջրակալիվացվող կամ հի- պերգոլիական հեղուկներ, ֆոսֆիդներ, կամ պիրոֆոր նյութեր պարունակող պատ- րաստվածքներ), որոնք պա- հանջում են յուրաքանչյուր տեսակի մեկուսացում	1.1L	1.2L	1.3L	-	-	-
N	պատրաստվածքներ, որոնք պարունակում են միայն բա- ցառիկ անզգայուն ճայթիչ նյութեր	-	-	-	-	-	1.6N
S	նյութեր կամ պատրաստ- վածքներ, փաթեթավորված կամ նախագծված այնպես, որ պատահական գործարկ- ման դեպքում ցանկացած վտանգ սահմանափակվում է փաթեթավորումով, իսկ տարայի կրակով վնասման դեպքում պայթյունի կամ ցրման գործողությունը սահմանափակ է, բայց չի խոչընդոտում վթարային միջոցառումների անցկացմանը կամ կրակի մարմանը փաթե- թավորման անմիջական մոտակայքում	-	-	-	1.4S	-	-

35. Դաս 2-ին պատկանում են սեղմված, հեղուկացված և ճնշման տակ լուծված գազերը, որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներից գոնե մեկին՝

1) գոլորշիների բացարձակ ճնշումը 50°C ջերմաստիճանի դեպքում **300** կՊա-ից պակաս չէ.

2) կրիտիկական ջերմաստիճանը 50°C -ից ցածր է:

Ըստ ֆիզիկական հատկությունների և ագրեգատային վիճակի, գազերը բաժանվում են հետևյալ խմբերի՝

1) 1՝ սեղմված, որոնց կրիտիկական ջերմաստիճանը -10°C -ից ցածր է.

2) 2՝ հեղուկացված, որոնց կրիտիկական ջերմաստիճանը պակաս չէ -10°C -ից, բայց ցածր է 70°C -ից.

3) 3՝ հեղուկացված, որոնց կրիտիկական ջերմաստիճանը պակաս չէ 70°C -ից.

4) 4՝ լուծված ճնշման տակ.

5) 5՝ հեղուկացված սառեցված, փոխադրվում են մթնոլորտայինին մոտ ճնշման տակ.

6) 6՝ նյութեր անբոգոլային փաթեթավորումով, որի տարողությունը **1000** սմ³ -ից պակաս, չէ, և որոնք գտնվում են ոչ ավելի, քան **1ՄՊա** ճնշման տակ:

36. Դաս 3-ին պատկանում են դյուրավառ հեղուկները, որոնց բռնկման ջերմաստիճանը փակված մամլասալում (անոթում) չի գերազանցում **61°C** :

Ենթադաս **3.1**-ին պատկանում են դյուրավառ հեղուկները, որոնց բռնկման ջերմաստիճանը փակ մամլասալում մինուս **18°C** -ից ցածր է:

Ենթադաս **3.2**-ին պատկանում են դյուրավառ հեղուկները, որոնց բռնկման ջերմաստիճանը փակ մամլասալում ցածր չէ մինուս **18°C** -ից, բայց ցածր է **23°C** -ից:

Ենթադաս **3.3**-ին պատկանում են դյուրավառ հեղուկները, որոնց բռնկման ջերմաստիճանը փակ մամլասալում **23°C** -ից բարձր է, սակայն ավելի չէ **61°C** -ից:

37. Դաս 4-ին պատկանում են դյուրավառ պինդ նյութերը, ինքնաբռնկվող նյութերը և նյութերը, որոնք ջրի հետ համագործակցելիս արտանետում են բռնկվող գազեր:

Ենթադաս 4.1-ին պատկանում են դյուրավատ պինդ նյութերը, որոնք ունակ են բռնկվելու ցածր էներգիայով օժտված բռնկման աղբյուրի (լուցկու բոց, կայծ, չմարած ծխախոտ) հետ կարճաժամկետ (30վ) համագործակցելու դեպքում:

Ինքնաբռնկվող նյութերը, որոնք առանց օդի մուտքի հակված են էկզոթերմիկ քայքայմանը (ալիֆտային ազոմիալորումները, արոմատիկ սուլֆոհիդրագիդները, N-նիտրոմիալորումները, երկագուաղերը և այլն, որոնց քայքայման ջերմաստիճանը չի գերազանցում 65°C):

Պինդ նյութերը և պատրաստվածքները, որոնք բռնկվում են շփումից, խոնավացված պայթավտանգ նյութերը (սպիրտով, ջրով կամ ֆլեզմատիզատորով), որոնց այդ վիճակում գտնվելու վտանգի հիմնական տեսակը բռնկման աղբյուրից բռնկվելու հնարավորությունն է:

Ենթադաս 4.2-ին պատկանում են հրակիր նյութերը (նյութեր, որոնք հեշտ բռնկվում են օդային միջավայրում) և այլ նյութեր, որոնք ունակ են ինքնուրույն տաքանալու մինչև ինքնաբռնկվելը:

Ենթադաս 4.3-ին պատկանում են այն նյութերը, որոնք $20 \pm 5^\circ\text{C}$ ջերմաստիճանի տիրույթում ջրի հետ համագործելիս արտանետում են վտանգավոր քանակներով (ոչ պակաս $1\text{ դմ}^3/\text{կգ ժ-ից}$) ինքնաբռնկվող կամ բռնկվող գազեր:

38. Դաս 5-ին պատկանում են թթվեցնող նյութեր և օրգանական պերօքսիդներ, այսինքն նյութեր, որոնք արտանետում են թթվածին, որը պատճառ է դառնում այրվող նյութերի ինքնաբռնկմանը կամ այլ նյութերի հետ կազմում է պայթավտանգ խառնուրդներ:

Ենթադաս 5.1-ին պատկանում են այն թթվեցնող նյութերը, որոնք նպաստում են այրմանը, պատճառ են դառնում և (կամ) նպաստում են այլ նյութերի բռնկմանը, որոնց քայքայման ջերմաստիճանը չի գերազանցում 65°C -ը:

Ենթադաս 5.2-ին պատկանում են օրգանական պերօքսիդները, այսինքն նյութերը, որոնք պարունակում են R-O-O-R ֆունկցիոնալ խումբ: Օրգանական պերօքսիդները թերմաանկայուն նյութեր են, որոնք զգայուն են հարվածի և շփման նկատմամբ:

39. Դաս 6-ին պատկանում են վտանգավոր քիմիական և վտանգավոր կենսաբանական նյութերը:

Ենթադաս 6.1-ին պատկանում են վտանգավոր քիմիական նյութերը, որոնք պատճառ են դառնում թունավորումների:

Ենթադաս 6.2-ին պատկանում են նյութերը, որոնք պարունակում են մարդկանց և կենդանիների համար հիվանդություններ առաջացնող միկրոօրգանիզմներ:

40. Դաս 8-ին պատկանում են այն քայքայիչ նյութերը կամ դրանց ջրային լուծույթները, որոնց հետ մարդկանց անմիջական շփումը հանգեցնում է մաշկի նեկրոզի և (կամ) կոռոզիոն նյութեր և դրանց ջրային լուծույթները, որոնք ունակ են քայքայելու պողպատե (Ստ 3) կամ ալյումինե (Ա6) մակերևույթը ոչ պակաս արագությամբ, քան 6,25 մմ մեկ տարում 55° C ջերմաստիճանի դեպքում:

Ենթադաս 8.1-ին պատկանում են քայքայիչ և (կամ) կոռոզիոն նյութերը, որոնք օժտված են թթվային հատկություններով:

Ենթադաս 8.2-ին պատկանում են այրող և (կամ) կոռոզիոն նյութերը, որոնք օժտված են ալկալիական հատկություններով:

Ենթադաս 8.3-ին պատկանում են այրող և (կամ) կոռոզիոն նյութերը, որոնք ընդգրկված չեն 8.1-ին և 8.2-րդ ենթադասերում, սակայն օժտված են այրող և (կամ) կոռոզիոն հատկություններով:

41. Դաս 9-ին պատկանում են վտանգավոր բեռները, որոնք ընդգրկված չեն 1-8-րդ դասերում:

Ենթադաս 9.1-ին պատկանում են այն նյութերը և պատրաստվածքները, որոնք համապատասխանում են վտանգի հետևյալ չափորոշիչներից գոնե մեկին:

9.1.1-ին կարգին պատկանում են բռնկվող, վտանգավոր քիմիական, այրող և (կամ) կոռոզիոն նյութերը՝ աերոզոլային փաթեթավորումով, որոնց ծավալը գտնվում է **50-1000** սմ³

տիրույթում, բացառություն են կազմում այն նյութերը, որոնց համար պահպանվում են հետևյալ պայմանները`

- 1) բացակայում է բռնկվող գազը.
- 2) ավելցուկային ճնշումն ավելի չէ **850** կՊա-ից ջերմաստիճանի **55° C** դեպքում.
- 3) դյուրավառ հեղուկի զանգվածային չափաբաժինը պակաս է **10%** -ից.
- 4) վտանգավոր քիմիական նյութերի զանգվածային չափաբաժինը պակաս է **1%** -ից.
- 5) այրիչ նյութի զանգվածային չափաբաժինը պակաս է **0,2%** -ից:

9.1.2-րդ կարգին պատկանում են հեղուկներ, որոնց բռնկման ջերմաստիճանը **61° C**-ից բարձր է, սակայն ցածր է **90° C**-ից:

9.1.3-րդ կարգին պատկանում են պինդ նյութեր, որոնք բռնկվում են գազայրոցի գործողությունից (ոչ պակաս **30** վրկ, բայց ոչ ավելի **120** վրկ) ժամանակահատվածում:

Նյութեր, որոնք հատուկ փորձարկումների պայմաններում **24** Ժ-ից ոչ ավելի ժամանակահատվածում շրջապատող միջավայրի **140° C** դեպքում ունակ են ինքնատաքացման ոչ պակաս, քան **150° C**-ը, բայց ոչ ավելի **200° C**-ից: Նյութեր, որոնք ջրի հետ համագործակցելիս արտանետում են բռնկվող գազեր **0.5~1** դմ³ /կգ Ժ ինտենսիվության տիրույթում:

9.1.4-րդ կարգին պատկանում են այն նյութերը, որոնց քայքայումը, որն սկսել է որոշակի տեղում, տարածվում է ամբողջ զանգվածով:

9.1.5-րդ կարգին պատկանում են վտանգավոր քիմիական նյութեր, որոնք ընդունակ են առաջացնել թունավորում շնչառության ժամանակ (գոլորշի և փոշի) և (կամ) մաշկի հետ շփման դեպքում:

9.1.6-րդ կարգին պատկանում են այրիչ և կոռոզիոն նյութեր:

42. Յուրաքանչյուր դասին պատկանող նյութի փաթեթավորման խմբի և վտանգավորության աստիճանը որոշվում է չափորոշիչներին համապատասխան:

43. Լրացուցիչ, վտանգավոր բեռները բաժանվում են կարգերի, համատեղելիության խմբերի և ըստ դասակարգման ծածկագրերի, որոնք ներկայացված են **N 13** աղյուսակում:

Սյունակում թվերի բացակայությունը չի նշանակում, որ տվյալ վտանգավոր բեռին դասակարգային ծածկագիր չնորհելն անհնար է:

Վտանգավոր բեռների (դաս 2) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 3

Ենթադասի համարը	Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
			լրացուցիչ	
1	2	3	4	5
2.1.	1	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	2	2111
			-	2112
				2113
				2114
				2115
				2116
	2	թթվեցնող	2	2121
			5	2122
				-
				2125
2.2.	1	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	2; 6"ա"	2211
			-	2212
				2213
				2214
				-
				2216
	2	թթվեցնող	2; 6"ա"	2221
			5	2223
				-
				-
				-
	3	այրիչ և (կամ) կոռոզիոն	2; 6"ա"	-
				2232
			8	2233
				-
				-
				-
	4	թթվեցուցիչ, այրիչ և (կամ)	2; 6"ա"	-

1	2	3	4	5
		կոռոզիոն	5; 8	- 2243 - - -
2.3.	1	լրացուցիչ վտանգի տեսակից գուրկ	2;3	2311
			-	2312 2313 2314 2315 2316
	2	այրիչ և (կամ) կոռոզիոն	2;3	-
			8	- 2323 - - -
2.4.	1	լրացուցիչ վտանգի տեսակից գուրկ	2; 6"ա"; 3	2411
			-	2412 2413 2414

Վտանգավոր բեռների (դաս 3) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 4

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգային ծածկագիրը ենթադասում		
			3.1	3.2	3.3
1.	լրացուցիչ վտանգի տեսակից գուրկ	3	3111	3211	-
		-	3112	3212	-
		-	-	-	3313
2.	վտանգավոր քիմիական	3	3121	3221	-
		6"ա"	3122	3222	-
		-	-	-	3323
3.	վտանգավոր քիմիական և այրիչ և (կամ) կոռոզիոն	3	3131	3231	-
		6"ա"; 8	-	-	3332

			-	-	3333
4.	այրիչ և (կամ) կոռոզիոն	3	3141	3241	-
		8	-	3242	3342
			-	-	3343
5.	քիչ վտանգավոր քիմիական	3	3151	-	-
		6"բ"	3152	3252	-
			-	-	3353

Վտանգավոր բեռների (ենթադաս 4.1.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 5

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
		լրացուցիչ	
1.	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	4"ա"	4111
		-	4112
			4113
2.	վտանգավոր քիմիական	4"ա"	4121
		6"ա"	4122
			-
3.	քիչ վտանգավոր քիմիական	4"ա"	4131
		6"բ"	4132
			4133
4.	այրիչ և (կամ) կոռոզիոն	4"ա"	4141
		8	-
			-
5.	ինքնաքայքայվող, փաթեթավորման պատժման վտանգով 50°C-ից բարձր ջերմաստիճանի դեպքում	4"ա"	-
		1"ա"	4152
			4153
6.	ինքնաքայքայվող, 50°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում	4"ա"	-
		-	4162
7.	ինքնաքայքայվող, փաթեթավորման պատժման վտանգով 50°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում	4"ա"	-
		1"ա"	4172
			-
8.	ինքնաքայքայվող, 50°C-ից	4"ա"	4181

	բարձր ջերմաստիճանի դեպքում	-	4182 -
--	-------------------------------	---	------------------

Վտանգավոր բեռների (ենթադաս 4.2.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 6

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
		լրացուցիչ	
1	2	3	4
1.	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	4"բ"	4211
		-	4212
			4213
2.	վտանգավոր քիմիական	4"բ"	4221
		6"ա"	- -
3.	քիչ վտանգավոր քիմիական	4"բ"	4231
		6"բ"	4232 4233
4.	այրիչ և (կամ) կոռոզիոն	4"բ"	-
		8	4242
5.	ջրի հետ համագործակցելիս բռնկվող գազեր արտանետող	4"բ"	4251
		4"գ"	- 4253

Վտանգավոր բեռների (ենթադաս 4.3.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 7

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
		լրացուցիչ	
1	2	3	4
1.	լրացուցիչ վտանգի տեսակից	4"գ"	4311

1	2	3	4
	զուրկ	-	4312 4313
2.	վտանգավոր քիմիական	4"զ" 6"ա"	4321 4322 -
3.	դյուրավառ հեղուկներ	4"զ" 3	4331 4332 -
4.	ինքնաբռնկվող և վտանգավոր քիմիական	4"զ" 4"բ" ; 6"ա"	4341 - -
5.	քիչ վտանգավոր քիմիական	4"զ" 6"բ"	4351 4352 4353
6.	դյուրավառ և այրիչ և (կամ) կոռոզիոն	4"զ" 3; 8	4361 4362 -
7.	ինքնաբռնկվող	4"զ" 4"բ"	- 4372 -
8.	դյուրավառ պինդ	4"զ" 4"ա"	- 4382 -

Վտանգավոր բեռների (ենթադաս 5.1.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 8

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
		լրացուցիչ	
1.	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	5	5111
		-	5112 5113
2.	վտանգավոր քիմիական	5	5121
		6"ա"	5122 -
3.	քիչ վտանգավոր քիմիական	5	-

		-	- 5133
4.	վտանգավոր քիմիական, այրիչ և (կամ) կոռոզիոն	5	5141
		6"ա"; 8	- -
5.	այրիչ և (կամ) կոռոզիոն	5	5151
		8	5152 -

Վտանգավոր բեռների (ենթադաս 5.2.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 9

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
		լրացուցիչ	
1	2	3	4
1.	պայթյունավտանգ, ինքնաքայքայվում են 50°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում	5	5211
		1"ա"	5212 -
2.	ինքնաքայքայվում են 50°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում	5	5221
		-	5222 -
3.	պայթյունավտանգ	5	5231 5232
		1"ա"	-
4.	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	5	5241 5242
		-	-
5.	քայքայիչ աչքերի համար	5	5251
		8	5252 -
6.	դյուրավառ	5	-
		3	5262 -
7.	դյուրավառ, քայքայիչ աչքերի համար	5	5271
		3; 8	- -

Վտանգավոր բեռների (ենթադաս 6.1.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 10

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգման ծածկագիրը
		լրացուցիչ	
1	2	3	4
1.	Էթերային վտանգավոր քիմիական նյութեր, լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	6"ա"	6111
		-	6112
		6"բ"	6113
		-	
2.	Էթերային վտանգավոր քիմիական նյութեր, դյուրավատ, բռնկման ջերմաստիճանը 23°C-ից ոչ ավելի	6"ա"	6121
		3	6122 -
3.	Էթերային վտանգավոր քիմիական նյութեր, դյուրավատ, բռնկման ջերմաստիճանը 23°C-ից ավելի, բայց 61°C-ից պակաս	6"ա"	6131
		3	6132 -
4.	Էթերային վտանգավոր քիմիական նյութեր, այրիչ և (կամ) կոռոզիոն	6"ա"	6141
		8	6142 -
5.	Էթերային վտանգավոր քիմիական նյութեր, այրիչ և (կամ) կոռոզիոն, դյուրավատ, բռնկման ջերմաստիճանը 23°C-ից ավելի, բայց 61°C-ից պակաս	6"ա"	6151
		3; 8	6152 -
6.	ոչ էթերային վտանգավոր քիմիական նյութեր, լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	6"ա"	6161
		-	6162
		6"բ"	6163
		-	
7.	ոչ էթերային վտանգավոր քիմիական նյութեր, այրիչ և (կամ) կոռոզիոն	6"ա"	6171
		8	6172 -
8.	ոչ էթերային վտանգավոր	6"ա"	-

1	2	3	4
	քիմիական նյութեր, դյուրավառ, պինդ	4"ա"	6182 -

Վտանգավոր բեռների (դաս 7) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 11

Կարգի համարը	Կարգի անվանումը	Դասակարգման ծածկագիրը
1	2	3
0.	հատուկ պայմանավորվածությունով փոխադրվող ռադիոակտիվ նյութեր	7104
1.	տրոհվող (միջուկային) ռադիոակտիվ նյութեր	7111 7112 7113 -
2.	ռադիոակտիվ նյութեր ցածր տեսակարար ռադիոակտիվությամբ, փոխադրվող միայն բացառիկ օգտագործման պայմաններով	7121 7122 7123 7124
3.	ռադիոակտիվ նյութեր ցածր տեսակարար ակտիվությամբ	7131 7132 7133 -
4.	հրակիր ռադիոակտիվ նյութեր	7141 7142 7143 -
5.	թթվեցնող ռադիոակտիվ նյութեր	7151 7152 7153 -
6.	ռադիոակտիվ մակերևութային կեղտոտվածությամբ բեռներ	7161 7162
7.	ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրներ	7171 7172 7173

1	2	3
		-
8	կոռոզիոն ռադիոակտիվ նյութեր	7181 7182 7183 -

Վտանգավոր բեռների (դաս **8**) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 12

Կարգի համարը	Կարգի անվանումը	Վտանգի նշանի համարը	Դասակարգային ծածկագիրը ենթադասում			
			լրացուցիչ	8.1	8.2	8.3
1.	լրացուցիչ վտանգի տեսակից զուրկ	8	8111 8112	8211 8212	8311 8312	
		-	8113	8213	8313	
2.	վտանգավոր քիմիական և թթվեցնող	8	8121	8221	8321	
		6"ա"; 5	- -	- -	- -	
3.	դյուրավատ, բռնկման ջերմաստիճանը 23°C -ից ոչ ավելի	8	8131	8231	-	
		3	- -	- -	8332 -	
4.	դյուրավատ, բռնկման ջերմաստիճանը 23°C -ից ավելի, բայց 61°C -ից պակաս	8	-	8241	8341	
		3	8142 8143	8242 -	8342 -	
5.	թթվեցնող	8	8151	8251	-	
		5	8152 -	- -	8352 -	
6.	վտանգավոր քիմիական	8	8161	-	8361	
		6"ա"	8162 -	8262 -	8362 -	
7.	քիչ վտանգավոր քիմիական	8	8171	-	8371	
		6"բ"	8172 8173	8272 8273	8372 8373	
8.	թույլ թթվեցուցիչներ	8	8181	-	-	
		-	8182 -	8282 8283	8382 -	

Վտանգավոր բեռների (ենթադաս 9.1.) դասակարգման աղյուսակ

Աղյուսակ N 13

Կարգի համարը	Կարգի անվանումը	Դասակարգման ծածկագիրը
1.	աերոզոլային փաթեթավորումով նյութեր	9113
2.	նյութեր, որոնց բռնկման ջերմաստիճանը 61°C-ից ավելի է, բայց 90°C-ից պակաս	9123
3.	բռնկվող նյութեր. նյութեր, որոնք ունակ են ինքնուրույն տաքանալու և բռնկվելու նյութեր, որոնք ջրի հետ համագործակցելիս արտանետում են բռնկվող գազեր	9133
4.	թույլ թթվեցիչներ	9143
5.	քիչ վտանգավոր քիմիական նյութեր	9153
6.	թույլ այրիչ և (կամ) կոռոզիոն նյութեր	9163
7.	մագնիսացված նյութեր <*>	9173

44. <*> - Սույն բեռները վտանգավոր են միայն օդային տրանսպորտով փոխադրման ժամանակ:

45. Վտանգի նշաններն են՝

